

Պատմվածքներ
«Որսորդական Պատմվածքներ» շարքից.

[Թե ինչու ես սիրում եմ որսորդությունը](#)

[Ահր](#)

[Հոգատարություն](#)

[Ներկարար Նիկոլի խնայողամարկոյ](#)

[Միջուրինյան տունկեր](#)

[Ուշացած խոստովանություն](#)

[Որսորդի դատաստանը](#)

[Մանկապարտեզի դաստիարակչուհին](#)

[Քարակոփ կացարան](#)

Թե ինչու ես սիրում եմ որսորդությունը

Է՛յ հին ծանոթներ,
Է՛յ կանաչ սարեր ...
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Այն բնությունը, ուր լեռնային վճիտ առվակի նման կարկաչել է իմ մանկությունը,—
փարթամ է ու որսառատ: Այնտեղ, ուր վերջանում է սաղարթախիտ դարավոր անտառն ու
սկսվում ալպիական մուգ կանաչագույն պանորաման, ուր ձգվում են թավշյա
սարահարթերը, դուք այժմ էլ կհանդիպեք մեր լեռների թագուհուն՝ եզգերվին: Ամառը նրա
մորթը շեկ կարմրագույն է և փայլվիլում է արևի տակ՝ ոսկեգոծ բեհեզի նման: Ամառը երբ
բարձունքներում սարվորների ժխորն է տիրում, նա իջնում է հով ծմակները: Ուշ աշնանը
նա արածում է լեռան քամու սրբած լանջերին և անձկությամբ նայում ցած՝ տաք ու
փարթամ անտառներին ու ձորերին, ուր եզ ու գոմեշ, գառն ու ոչխար վայելում են
բնության առատ բարիքը:

Այժմ էլ Արփավուտի մթին թավուտներում, ուր հողը հավիտենապես գրկված է արեգակի
կենարար ճառագայթներից, ուր աճում ու փսում է դարավոր կաղնին, արջն իր
քոթոթներով ետ է տալիս թափված տերևի հաստ շերտը և ազահությամբ խժռում տանձն
ու կաղինը: Իսկ դեկտեմբերի վերջին, երբ վեր է կենում ցրտաշունչ քամին, նա, հեվալով
իր կուտակած ճարպի հաստ շերտի տակ, մազլցում է վեր ու ձմեռային քուն մտնում խոր
քարանձավներում:

Այժմ էլ մեր լեռների ամենագողտրիկ, սքանչելի բնակիչները՝ քարայծյամն ու եղնիկը
ոստոստում են թփուտներում, լեռան այն լանջերին, ուր փարթամ բուսականությունը
հյուսվել է ժայռերին, բարձրացել վեր և ապառաժները թաղել խիտ կանաչի մեջ:

Այժմ էլ, լուսադեմին, եթե զգուշությամբ բարձրանաք մեր գյուղի վերև ընկած բլուրներն, ուր ամռան լուսընկա գիշերներին եզները մեղմ, որոճացել են, և խլուրդը գետնուղիներ է փորել, դուք կպատահեք մեր հանդերի ամենախորամանկ կենդանուն՝ աղվեսին՝ մուկ որսալիս:

Իսկ գայլը քայլ առ քայլ ժայռերի ու թփերի հետևից այսօր էլ հետևում է հոտին:

Ես մեծացել եմ այդ կենդանիների մեջ, եղնիկների հետ, եղնիկի պես...

Քանի՛քանի անգամ հանդիպել եմ նրանց, հիացմունքով դիտել, երբ նրանք թեթև սուրացել են լեռն ի վեր, երբ քարայծր թռչկոտել է բարձրաբերձ ժայռերի ճակատին: Եվ քանի՛քանի անգամ հեկ ի հեկ վազել եմ, կախվել ժայռերից, փորսող եմ տվել թփերի տակ, ու սուլել է իմ հրացանի գնդակն անողորմ ու դաժան:

Լեռը, անտառը, խոխոջուն առուն, ծաղիկների բույրը—ահա իմ մայրը, որի գրկում մեծացել եմ հարազատ մորից զրկվելուց հետո: Թարմ ու հոտավետ կանաչը — ահա իմ անկողինը, ուր ննջել եմ ես զեփյուռի մեղմ շոյանքի տակ՝ այքերս հառած աստղալից երկնքին:

Եվ երբ լեռան կատարից դիտել եմ արևածագը, երբ ձյունը փայլվել է ադամանդի շեղջի նման, երբ որոտացել է իմ հրացանը փախչող այծյամների հոտի ետևից, ճչացել եմ ես մանկան բերկրանքով:

Երբ ջարդված ու հոգնած նստել եմ զուլալ ջրերի մոտ, ուսիցս ցած առել որսորդական պայուսակը, ինձ թվացել է, թե չկա ավելի ախորժեղի բան, քան ցամաք հաց ու պանիրը, լեռնային վտակի ափին:

Երթ խարույկը ճարճատել է թանձր խավարի մեջ ու մեր ստվերները երկարել են մթին բլուրներում, երբ մենք շամփուրներ ենք պատրաստել մասրենու թարմ ոստերից և լսել դազախեցի որսկան Շաքարի պատմությունները, մեզ գերել է բնության անողորմը, նրա իմաստուն խաղաղությունը: Վտանգը հետևել է մեզ քայլ առ քայլ: Սողացել ենք ձյան հյուսերի հետ, ապառաժից իջնելիս պոկ է եկել մեր հենարանը, մահասարսուռ դող ենք զգացել մթին որջի առաջ, երբ կրակոցից զարթնած արջը դուրս է եկել քարանձավից կատաղի մռնչունով:

Այնուամենայնիվ, սառնամանիքը, քաղցը, ծարավը և որսորդության հետ կապված մյուս դժվարությունները չեն կոտրել իմ հոգու կորովը: Դրանք ինձ ամրացրել են ֆիզիկապես, կռվել իմ բնավորությունը:

Եվ այժմ էլ, երբ ես ապրում եմ ա՛յլ վայրերում, ա՛յլ կյանքով, երբ դարձել եմ գրքի ու գրչի մարդ, ես ավելի սրտառուչ, ավելի անզուսպ եմ ձգտում դեպի լեռները:

Հիմա էլ իմ հավատարիմ ընկերը, իմ հինավուրց բարեկամ հրացանը կախված է մահճակալիս վերև՝ քարայծի եղջյուրներից: Երբ վերջանում է աշխատանքը և քաղաքը

պատրաստվում է հանգստի օրվան, պատից ցած է իջնում իմ հրացանը և փամփուշտակալը նորից է ծանրանում:

Եվ այն ժամին, երբ մայրաքաղաքում պետական օպերայի դռներից դուրս է հոսում այլերանգ հասարակությունը, մեր խարույկը պայծառ ճաճանչելով վառվում է Չաթին Դադի բարձունքներում, և մենք ազահությամբ ներշնչում ենք լեռնային անապական օդը, արբենում հովի շնգշնգոցից ու նախա-զգում մոտալուտ որսի բերկրանքը:

Այդ իրոք որ հետաքրքրական և գեղեցիկ մի կյանք է, մարդու մեջ կենսարար ուժերը վերարտադրող մի կյանք, որին կուզեմ, որ ծանոթ լինի մեր պատանեկությունը: Ոչ միայն ծանոթ լինի, այլև ապրի այդ կյանքով, սիրի շրջագայությունը լեռներում, թարմանա և ամրանա վաղվա պայքարների համար, սիրի գենքն ու որսորդությունը, սիրի մեր բնության հրաշալիքները: Կար ժամանակ, երբ կարիքի տակ կորացած՝ մենք չէինք տեսնում արևի պայծառությունը և չէինք լսում գեփյուռի մեղեդին: Մեր նոր սերունդը, որն ունի լազուր երկնքի նման ջինջ առօրյա, չի կարող սրտանց չսիրել լեռների վսեմությունը, ծաղկի բուրմունքը և սվսվացող անտառը՝ լուսընկա գիշերին: Մենք լիառատ պետք է օգտվենք բնության անհուն ու անսպառ գեղեցկությունից մեր մեջ այդ գեղեցկությունն ամբարելու, մեր ավյունն ու եռանդը բազմապատկելու համար:

Այդ կյանքի հրապույրը ես ներծծում եմ նեկտարի նման, այդ կյանքը ես ազահությամբ կլանում եմ բնության գրկում և արժե այստեղ մի քանի դրվագ պատմել այդ կյանքից:

(Հեղինակի «Որս» գրքի առաջաբանից)

Սհր

(Բնասերի հուշատետրից)

Ի՛նչ շողշողուն մրգեր կան Սև ծովի ափին... Աշնանը հանգստանում էինք Սուխումիում, Գասպար քեռու տանը և ամեն օր վայելում հյուրասեր տանտիրոջ տնամերձ այգու պտուղները: Այգին տարածվում էր լեռան ստորոտում, իսկ նրանից վեր՝ կանաչ անտառն էր ուղղահայաց բարձրանում մինչև ամպերը, մինչև ծեր Կովկասի ճերմակ գագաթները: Ի՛նչ փարթամ, ի՛նչ պտղաբեր երկիր է. այստեղ ժայռերն անգամ պատած են պտղատու ծառերով: Ա՛յ, մրգի աշխարհ:

Ափսո՛ս որ իմ խանձված ու մերկ երկրի համն, ու հոտը չունեն այս շքեղ երկրի շքեղ պտուղները:

— Գասպա՛ր քեռի, չնեղանաս, ինչո՞ւ են անհամ ձեր մրգերը...

— Ինչի՞ պիտի նեղանամ որ: Ինչ ճիշտ է, ճիշտ, ձեր երկրի միրգը ուրիշ համ ունի:

Թեթևացա: Ուրեմն ինձ չի թվում, այլ իրոք այդպես է:

— Արև՛ը, արև՛ը... Երևանի արևը, որ այստեղ լինէր, մեր միրգն էլ ձերի նման կլինէր:

Այո՛, արևն է աղբյուրը բոլոր այն բույրերի, որից արբենում ենք մենք: Բայց մի՞թե միայն արևը:

Այդ խնդիրով էր զբաղված բնասերի իմ միտքը, երբ հաջորդ տարին Խոստայում ավելի դժվար հարցի դեմ առա:

— Այսքան անձրևների, այսքան առատ ջրի մեջ ինչո՞ւ են ցամաք այստեղի մրգերը,— մի անգամ դիմեց ինձ իմ ընկեր

Հրաչ Քոչարը, ձեռքի կիսատ խնձորին տարակուսանքով նայելով:

— Բնասեր ես, դե բացատրի՛ր... Այո, մեր Դալմայի քարքարոտ հողում տանձենիներ են բուսնում, որոնց պտուղը կծելուն պես ջուր է ցայտում: Կա՞ ավելի հյութեղ պտուղ, քան մեր Արարատյան երկրի խանձված ու քարքարոտ վայրերի պտուղը: Դե՛, եկ պատասխան տուր հարցասեր ընկերոջդ՝ այստեղ պակաս է ջուրը, ամեն ինչ խանձվում է հարավի արևի տակ, բայց պտուղները հյութեղ են, իսկ այնտեղ Սև ծովը տարին–տասներկու ամիս անձրև է թափում Կովկասի լանջերին, ծառերը ջրվում են լիուլի և տալիս... անհյութ ու ցամաք տանձ ու խնձոր:

Արտաշատից վերև որս եմ փնտրում մերկ բլրի լանջին. այստեղ դաշտահավեր են լինում: Մի փորոք մեքենա հոնդոցով լայնացնում է բլրին գոտի կապած հին առվի հունը, իսկ նրա ետևից վրա են տալիս սաթի նման սև սերմնագռավները, որդեր են փնտրում ընդերքից հանված թարմ հողի մեջ:

Ցած իջա, հրացանիս տեսքից թռչունները թռան սարսափահար: Նայում եմ առվի հատակից հանված թարմ տիդմին ու զարմանքով ծառի արմատի կտորտանքներ նկատում նրա մեջ: Մոտերքում ծառ չկա, թուփ չկա: Չե՛, ինչպե՞ս չկա, վերելվում բլուրը մի կրծքախորշ ունի իր մեջ և այդ խորշում կույզ է եկել մի գաճաճ տանձենի: Բայց մի՞թե նրա արմատներն այս տեղ են հասել, ախր տանձենին հեռու է: Տնտղեցի արմատի կտորտանքը՝ տանձենի են: Ահա ջրանցքի պատին ջլատված ու ցցված են վերևից ցած մեկնված արմատների ծայրերը: Այո՛, տանձենին է ուղարկել վերևից, ուղարկել է ջուր բերելու իր համար, իր պտուղների համար...

Բարձրացել եմ վեր, նայում եմ տոթից, երաշտից կարճ մնացած, ճյուղերը ծուռ ու մուռ տարածած ծառին, որն իր հասակին անհամեմատ խոշոր արմատներ ունի և չափազանց մանր, կոշտ ու սուր–սուր տերևներ: Չննում եմ ու մտածում: Մտածում եմ ու հետզհետե քանդվում է ինձ զբաղեցնող հանելուկի կծիկը: Ամեն ինչով այս բույսը համարվել է քարքարոտ ու շոգ տեղանքին, հարմարվել է, որ ապրի: Լայն ու խորը տարածված այս այլանդակ արմատները նրա համար են, որ այս պապակ ու աղբատ վայրից ջուր հայթայթեն մայր ծառին:

Մեր Դիլիջանի անտառներում վիթխարի հաճարենիներ կան, որոնք այս թզուկ ծառի արմատների կեսն էլ չունեն, դե, ինչների՞ն է հարկավոր, այն խոնավ սևահողում առատ է

և ջուրը, և՛ սնունդը: Տանձենին փշեր չի ունենում, սա փշփշոտ է, որ քիչ ջուր գոլորշիացնի: Նեղ են տերևները և կոշտ շեր-տով պատած, նույնպես ներքևից դժվարությամբ ստացած ջրի չնչին քանակը իր ներսում պահպանելու «ձգտումից» է: Իսկ պտուղները: Հաստ և կոշտ կեղև ունեն դրանք, բայց երբ կծում ես՝ հյութը դուրս է ցայտում, քաղցր ու համեղ հյութը:

Եվ այդտեղ մի միտք փայլատակեց գլխումս, մի շատ կարևոր միտք: Ափսո՛ս, մարդ չկա մոտս, որ բարձր ասեմ. ախր երաշտի ահն է ստիպում այս ծառին ջուր կուտակել իր պտուղների մեջ, այս ծարավ վայրում ծարավ մնալու ահը...

Հիմի հասկացա՞ր, Հրաչ Քոչար, թե ինչու ցամաք պիտի լինեն ծովափի տանձն ու խնձորը: Նրանց համար ջուրը, հյութը ավելորդ դ բեռ է, քանի որ միշտ կարող են ջուր վերցնել այնքան հաճախ տեղացող անձրևներից: Մեր չոր ու պապակ երկրում, երբ ամառը վերևից Արևը կրակ է թափում՝ ամեն բույս ու ծառ «ահի» մեջ է: Ահ, իր կյանքի համար, իր սերունդների կյանքի համար: Եվ այդ «ահը» ստիպում է նրան հյութեր կուտակել պտուղների մեջ և այդ հյութերը պատել կոշտ պատյաններով, որ կիզիչ արևը չկարողանա նրանից խլել այնքան դժվարությամբ ձեռք բերված հյութը...

Դրանից են այդքան համեղ ու հյութեղ մեր արևոտ ու չոր երկրի պտուղները:

Հոգատարություն

Ի՛նչ հաջող են հեզնում մեր գյուղացիները: Եվ այնպես նուրբ, որ հավատալի չի գալիս, թե ձեռք են առնում քեզ:

Լոռու ձմեռանոցներից մեկի մոտ փափախը գլխին, մազոտ դեմքով մի ծերունու հանդիպեցինք:

— Բարի աջողում, որսի եք գնո՞ւմ,— հարցրեց նա մեր հրացաններին նայելով:

— Հա՛: Կխտարի ենք գնում,— հաստատեց ընկերս:

— Բա սելը որդի՞ բերեմ,— լուրջ դեմքով և գործնական հարցրեց ծերունին:

— Հարկավոր չի, բիձա՛, նեղություն մի քաշի,— զգացված պատասխանեցի ես ու հետն էլ մտածում եմ,

«Տես ի՛նչ ջիգարով մարդիկ են, է՛, մեր լոռեցիները»:

Ծերունին զարմացած վեր քաշեց թավ հոնքերը ու անկեղծ կարեկցությամբ հարցրեց.

— Բա առանց սելի ո՞նց կլի՛... Բա էնքանը ո՞նց եք բերելու...

Երեկոյան դեմ, երբ լեռներից իջնում էինք հոգնած ու դատարկաձեռն, այն ժամանակ միայն հասկացա, որ լոռեցին ձեռք է առել մեզ:

«Բա սելը որդի՞ բերե՛մ... Բա առանց սելի ո՞նց կլի՛...»:

Ներկարար Նիկոլի խնայողամարկողը

Սևանի ափին որս անելիս ես մի հետաքրքիր ծերունու հանդիպեցի: Թոռնիկները ավազի վրա խաղում էին, իսկ ինքը գրուցում էր ձկնորսների հետ: «Մայրաբ Նիկոլը»,— այդպես են կանչում նրան ծովափնյա Մարուխան գյուղում,— ծանոթացավ ինձ հանդիսավոր արժանապատվությամբ: Աշխատում էր խոսել մաքուր գրական լեզվով և երբեմն գրաբար բառեր էր գործածում: Խոսում էր գրականությունից՝ գիտակ մարդու տոնով: Առանձնապես հավանել էր «Վարդանանքը»:

— Դեմիրճյանին իրեն էլ եմ ասել,— հեղինակավոր տոնով հաղորդեց նա: — Մարդը լավ գիրք է գրել: «Մեսրոպ Մաշտոց»-ը դեռ չի՞ վերջացրել...

— Որտեղի՞ց գիտես...

Նեղացավ:

— Իմ գործը գրողների հետ է,— արժանապատվությամբ պատասխանեց նա:— Ճիշտ է, կրթության կողմանե թերի ենք, բայց գրականությունը սիրում ենք: Իցե թե պատահեք Վարպետին՝ հարցրեք, նա ինձ լավ գիտի...

— Ավետիք Իսահակյան՝նր: Ներողությո՛ւն, Դուք ներկարար չե՞ք...

Շփոթվեց, ապա իրեն տիրապետելով նույն արժանապատվությամբ շարունակեց.

— Ներկարարությունը նմանապես արվեստ է... Մենք հո ամեն մարդի տուն չե՞նք ներկի... Ես գրողների տներ եմ ներկում ու հետները գրականության մասին գրույց անում: Հարկավոր է, որ ժողովուրդը ստուգի, թե ինչ գործի են գրողները: Օրինակ, Վարպետի տունը ներկելիս ես նրան շատ ստիպեցի, որ ինձ ասի, թե երբ է վերջացնում «Ուստա Կարոն»: Դե, մեծ մարդ է, իցե թե, հեռու իրենից, գնում է ես աշխարհից, հո մենք էլ Ավետիք Իսահակյան չե՞նք ունենալու: Թող ավարտի՛ հետո գնա... Բա՞ ...

Այդպես հետս գրուցելով տարավ իր փեսայի բնակարանը, աղջիկը սեղան բաց արավ, Սևանի իշխանը հրապարակ եկավ զանազան «վարիանտներով»՝ խաշած, տապակած: Փորձեցի հրաժարվել գինուց, բայց Նիկոլ բիձեն ծանր ու հեղինակավոր խրատեց.

— Ձուկն ուտես գինի՛ն խմես՝ վայ ձկան գլխին... Ձուկն ուտես ջուրը խմես՝ վայ քո գլխին... . . .

Սևանի բնակիչների իմաստությունն է դա, որ ծնվել է ձկնորս ժողովրդի դարավոր փորձից: Դե ժողովրդի փորձի դեմ ինչ կարող ես անել՝ խմեցի՛նք: Նիկոլ բիձեն փափկեց,

քաղցրացավ, այքերը ջրակալեցին: Խոսում էր իր արհեստի նրբությունների մասին ու դարձյալ վերադառնում Վարպետին, «Ուս-տա Կարոյին», «Վարդանանքին»:

— Երևում է, որ արհեստիցդ գոհ ես,— դիտեցի ես:

— Հա՛, իմ արհեստը՝ ոսկի արհեստ է,— համաձայնվեց Նիկոլ բիձեն:— Ասա՛ ինչո՞վ: Նրանով, որ էդ արհեստի շնորհիվ ամեն տուն էլ մտնում ես, ամեն նշանավոր մարդու հետ էլ գործ ես բռնում: Հենց օրինակ Վարպետը. . .

— Եվ լավ էլ փող ես աշխատում, չէ՞,— Նիկոլ բիձու պոետիկ տրամադրությանը մի քիչ պրոզա խառնեցի ես:

Հոնքերը խոժոռեց:

— Հարցը փողը չի. . . Փողն ինչ, փողը որ կա՛ ձեռքի կեղտ է. . . Մարդ պիտի լինես, մարդի հետ նստես— վեր կենաս. . . Հա՛, փառք երկնքին, լավ եմ աշխատում. . .

— Բա էդքան փողը ինչ ես անում,— դիտմամբ խոսեցնում եմ ես:

— Գցում եմ խնայադրամարկը,— կարճ պատասխանեց Նիկոլ բիձան և երբ տեսավ, որ իր միտքը չհասկացա, ժպտաց խորամանկորեն:

Եվ որովհետև աղջիկը գիտե, թե որն է իր հոր, «խնայադրամարկը»՝ նույնպես նշանակալից ժպտաց:

— Հա՛, նմանապես պետք է ասեմ, որ իմ խնայադրամարկը ուրիշ տեսակ դրամարկ է,— շարունակեց Նիկոլ բիձեն: — Ես վեց որդի ունեմ, երեք տղա, երեք աղջիկ: Մայրություն եմ արել, փող աշխատել ու էդ փողով բոլորին էլ կրթության տվել: Մեկը ակադեմիա է ավարտել, գնդապետ է Մոսկվայում, երկուսը գիտական աշխատողներ են, էս աղջիկս էլ դասատու: Վեցից հինգը բարձրագույն կրթություն ունեն, միայն մեկը՝ միջնակարգ, էն էլ մեխանիկ է... Էդպես, թե դուք մի՛ դրամարկդում փող ունեք, էս վեցում ունեմ: Էստեղ Մարուխանում էլ դրամարկդ ունեմ, Երևանում էլ, Մոսկվայում էլ... Հիմի ծերությանս օրերին, հենց փող է պետք գալիս թե չէ՛ իմ դրամարկդերից հերթով քիչ-քիչ հանում եմ— գործ ածում...»

* * *

Այդ ամառ Նիկոլ բիձեն անսպասելի կերպով այցի եկավ ինձ. բերել էր իր թոռնիկ Լևոնի նվերը ինձ՝ վայրի աղավնու ձագեր:

Ուրախացանք, միասին սեղան նստեցինք, հիշեցինք Սևանը, իր «դրամարկները»: Առաջին հերթին «Ուստա Կարոյից» հարցրեց և վշտացավ, որ դեռ չի ավարտվել:

Հրաժեշտ տալիս հարցրեց.

— Իսկի չես ասում, թե Սևանի էն հով ափերից ինչի եմ եկել—ընկել էս շոգերի մեջ:

— Երևի եկել ես խնայողամարկղից փող հանելու,— ծիծաղեցի ես:

— Հա՛, լավ ես գլխի, եկել եմ խնայողամարկղներիցս մեկից փող տանեմ. . .

Ու գնաց: Քայլում էր մեջքը շիփ-շիտակ, արժանապատվությամբ, ապահով մարդու վստահությամբ:

Դե, իհարկե վստահ կքայլի. վեց դրամարկղում խնայողություններ ունի պահ տված. . .

Միջուրիկյան տունկեր

1.

Տարիների խորքից այսօր էլ ժպտում են այն զույգ ծիծաղկոտ աչքերը: Ի՛նչ դյուրիչ, ինչ չարաճճի են փայլում նրանք, նայողին կարծես ասում են. «Հապա՛, փորձեցեք անտարբեր մնալ. . .»: Եվ ո՞վ անտարբեր կմնար այդ երկար սիրուն թարթիչների, այդ կենսուրախ, խնդալի դեմքի և այդ աննման աչքերի հանդեպ:

Մենք այն ժամանակ, 1926 թվին չճանոթացանք: Մենք շատ հեռու էինք իրարից, նա Երևանի կոմսոմոլի զարդն էր, կոնֆերանսների աչքի ընկնող պատգամավորուհին, «կապույտ բլուզավորների»* շնորհալի ղեկավարը, կոմերիտական ակումբի հոգին: Իր շնորհքով, իր գեղեցկությամբ, իր մշտուրախ պայծառ դեմքով նա որոշ բարձրության վրա էր, որտեղից իր սիրուն աչքերով ընդգրկում էր ներքևում խոնվող կոմերիտական «ամբոխին», առանց իր ուշադրությունը կենտրոնացնելու առանձին անհատների վրա: Այդ բարձրության վրա նա տեսանելի էր բոլորիս համար, բայց նա մեզնից շատերին չէր ճանաչում: Ու թվում էր, որ նա անուշ ժպտում է մեզ բոլորիս, մենք ամենքս էլ մի-մի փոքրիկ բաժին ունենք նրա անսպառ ժպիտներից:

«կապույտ բլուզավորների» – կոմերիտական և բանվորական ինքնագործ խմբակներ:

Բայց այդ ժպիտները մենք անմիջականորեն նրանից չէինք ստանում.— դրանք սալորենուց թափվող ծաղիկների թերթիկների նման թրթռում էին օդում ու ցած իջնում աննպատակ, ամենքի վրա:

Երբ գիշերային տոթից սթափվում էր քաղաքը՝ այգիներից փչող վաղորդյան զեփյուռից, նա մի խումբ պատանիների գլուխ անցած Նորքի այգիների զարիվերով վեր էր ելնում ու քիչ անց որոտում էին հրացանները:

Զենքը, բնությունը, ճամփորդությունը նրա տարերքն էին: Զինավարժությունը վերջանալուց հետո խումբն իջնում էր ստադիոն և լողի մրցումներ կազմակերպում ընդարձակ ավազանում:

Կեսօրվա շոգին նա Զանգվի ափին էր, թթի ու կեռասի ծառերի վրա, ու նրա քրքիջը զրնգում էր ձորում:

Իսկ երբ երեկոն իջնում էր արևելյան շոգ ու փոշոտ քաղաքի վրա, թնդում էր երաժշտախումբը երիտակումբի պարտեզում ու նա խմբից խումբ անցնելով կազմակերպում էր պարը, խաղերը, զվարճությունը:

Ինչքա՛ն անհանգիստ ու եռանդոտ էր նա: Բանաստեղծն այն ժամանակ շատ տեղին համեմատեց նրան Զանգվի հետ: «Երիտասարդ բոլշևիկ» ամսագրի հենց առաջին համարում գծագրված էր այդ նշանավոր աղջկա կերպարը.

Այնքա՛ն նման էս դու նրան,
Կարծես դու նա էս, ու նա՝ դու.
Կարծես Զանգուն էս մեր հորձանուտ—
Այնքան նման էս դու նրան...

Ու այդ նույն բանաստեղծության մեջ երիտասարդ պոետը գանգատվում էր.

Ավտոմոբիլն արագ սլացավ,
Հասմիկ, դու չեկար մնաս բարի...

Ի՛նչ անհամեստ պահանջ: Այդ էր պակաս, որ նա, մեր բոլորի զգացմունքների աղբյուրն ու նպատակակետը գա քեզ «մնաս բարևի»: Իսկ էս միայն մի՛ բան կուզեի, գեթ մե՛կ անգամ ինձ առանձին ժպտար, միայն ինձ համար ժպտար և ոչ թե այդպես ընդհանուրիս, վերևից: Մեկ անգամ հատկապես նայեր ի՛նձ և զգայի, որ կարող եմ մնալ հիշողության մեջ: Բայց ի՛նչ եմ ասում. ինչի նման էի էս այն ժամանակ: Ահա իմ պատկերը. գյուղից նոր եկած, տանը գործած շալե շորերով, տրեխներով, ամաչկոտ ու երագող մի պատանի, որ նայում է մարդկանց անհամարձակ, իսկ Հասմիկին՝ հեովից, ակնածանքով:

Ամռան անդորր երեկոներին նա իր լեռներում գյուղաքաղաքի երաժշտությունն է լսել հեռավոր ու գեղեցիկ հեքիաթի նման ու ամբողջ հոգով տենչացել է այդ բարձր, կիրթ հասարակությունը:

Քաղաքն իր հոյակապ շենքերով, իր անհաշիվ գրքերով, իր շքեղ հագնված օրիորդներով, որ զբոսարանները լցնում են անուշահոտությամբ, նրան՝ տավարած այգ պատանուն անհասանելի իդեալներն էին թվում, մշտական երազանքի առարկա:

Ահա թե ինչու նա այժմ ակնածությամբ է նայում «կապույտ բլուզավորներին», նրանց գեղանի դեկավարին:

Մեկ անգամ միայն առիթ ունեցա նրա հետ խոսելու: Ակումբի պարտիզում նվագի տակ զույգ — զույգ եվրոպական պարեր էին պարում: Ա՛յնպես թեթև, ա՛յնպես սահուն: Դրանք իմ տեսած և իմացած պարերին բոլորովին նման չէին:

Ես ծառին հենված նայում եմ զույգերին: Հանկարծ երևաց նա մշտական ժպիտը դեմքին և ուղղակի դիմեց ինձ.

— Իսկ դո՞ւք ինչու չեք պարում:

Ես գլխահակ նայեցի կոշտ շալե բլուզիս ծայրին, տրեխներիս և շփոթված թոթովեցի.

— Էդ իմ իմացած պարիցը չի...

Նրա արծաթահնչուն ծիծաղը զրնգաց ծառուղիներում:

— Իսկ ձեր իմացածը ո՞րն է:

— Թարաքյամի...

— Ի՞նչ...

Ես լռեցի ու խիստ կարմրեցի:

Նա ժամանակ չունեի ինձնով զբաղվելու. նրա հայացքը սահեց անցավ իմ խղճուկ արտաքինի վրայով: Հաջորդ րոպեին նա արդեն մի կիրթ, լավ հագնված երիտասարդի հետ հողմի արագությամբ առաջ էր սլանում՝ երաժշտության աշխույժ ռիթմով:

Այդ րոպեին ես ինձ աշխարհիս ամենաանբախտ մարդն էի համարում:

Մենք զենքով խլեցինք իշխանությունը: Մենք խլեցինք մամուլը, դպրոցները: Մենք քաղաքականապես իշխում ենք ահա այս շքեղ հագնված նեպոլեոն երիտասարդության վրա: Ահա ես կոմսոմոլի Կենտկոմի անդամ եմ և համագումարում իմ ձայնը հնչում է խրոխտ, համարձակ, չէ՞ որ իմ բերանով Ղազախի ազատագրված երիտասարդությունն է խոսում:

Բայց սատանան տանի, ինչի՞ ենք պետք մենք — առանց կուլտուրայի: Մենք միակ բանը, որ չկարողացանք խլել նրանցից, դա նրանց կուլտուրան է: Այդ արդեն խլելու բան չէ, ինքներս պիտի ստեղծենք նորը, մե՛ք...

Իսկ այժմ գլխիկոր կանգնած եմ ծառի տակ ու մրթմրթում եմ գոեհկաբար.

— Թարաքյամի...

Թո՛ւհ, սատանան տանի: Ի՛նչ դժվար բան է եղել այժմ դաշնամուրի վրա վարժ նվագելը, պարելն ու մաքուր ռուսերենով սիրաշահելը:

Ինձ համար շատ ավելի հեշտ էր հրացանի կեսից բռնած ձերպերում փորսող տալ Բալա-Քյագումի և խմբապետ Գալոյի բանդիտների հետևից ու մահու կովի բռնվել նրանց հետ, քան երկու շնորհքով խոսք ասել այստեղ մի աղջկա: Իսկական արջ ենք մնացել սատանան տանի, ե՛րբ պիտի կուլտուրա ունենանք...

Ու խանդը, նրանց հասնելու ձգտումը քուն ու դադար չեն տալիս ինձ: Ես գլխիկոր հեռացա այդ վայրից և մտա գրքերի աշխարհը, կուլտուրայի ինձ անձանոթ բնագավառները:

Անցան տարիներ և ես շատ փոխվեցի: Փոխվեցի այնքան, որ երբ նա վերադարձավ Մոսկվայից (ուր սովորում էր ակադեմիայում) ու ծանոթացավ ինձ հետ, ոչ մի կերպ չկարողացավ հիշել, թե երբևիցե ինձ տեսել է կյանքում: Բայց դրա մասին հետո:

Առայժմ ասեմ, որ 1926 թվի աշնանը չքացավ այն թովոան աղջիկը և ինձ թվաց, թե մեր կազմակերպությունն իր արտաքին վորոշ չափով կորցրեց, կարծես հասմիկի թփից պոկել էին նրա ամենամեծ ու շքեղ ծաղիկներով զարդարված ոստը:

Այնուհետև ես երեկոները գնում էի երիտակումբի պարտեզը, հենվում էի նույն ծառին և անձկությամբ նայում ծառուղում զբոսնողներին ու հրապարակի վրա պարող զույգերին: Ու ինձ թվում էր, թե ահա նորից կհայտնվի նա, կնայի ինձ վրա չարածճի պայծառ աչքերով ու ժպտալով կհարցնի.

— Իսկ դուք չե՞ք պարում...

Բայց նա այլևս չերևաց, նրա զանգակ ծիծաղն այլևս չհնչեց ծառուղիներում և նրան այլևս չտեսա Զանգվի ափին կրակելիս կամ ծառ մագլցելիս: Նա գնացել էր Մոսկվա սովորելու: Տարածությունն ավելի մեծացավ մեր միջև:

Ակումբն ինձ համար կորցրեց իր հմայքը: Ես քաղաքից հեռացա ու հոգուս խորքում հետս մեր լեռները տարա այն պայծառ աղջկա անջնջելի պատկերը: Այդ շոգ ու փոշոտ քաղաքի զով երեկոներից միայն մի քաղցր հուշ մնաց երկար թարթիչներով ու խնդուն դեմքով այն աղջկա մասին, հուշ, որ հնանալով ավելի ու ավելի արբեցնող դարձավ հնացող գինու նման...

2.

Գյուղացիական թերթի հերթական համարի խմբագրականն եմ գրում այն մասին, թե ինչպես բնության մեծ հեղաշրջող Միչուրինի մեթոդով մենք կարող ենք և պետք է Սևանի մերկ ավազանը պատենք կանաչ այգիներով, մեղմացնենք այդ երկրի խստաշունչ կլիման և չոր ու անհրապույր այդ վայրերը Շվեյցարիա դարձնենք իր ջահել եղևնու անտառներով, խնձորենու այգիներով ու գրավիչ, զով պուրակներով:

Ես գրում ու կոչ էի անում գյուղական կազմակերպություններին, բայց քիչ հույս ունեի այդ գործի հաջողության վրա, քանի որ մեզ մոտ այդ տարիներին չկային միջուրինյան խիզախ նովատորներ:

Խմբագրության քարտուղարուհին ներս մտավ ու զեկուցեց.

— Ընկեր Ասլանյան, պտղաբուծական գոնալ կայանի ներկայացուցիչներն ուզում են տեսնել ձեզ:

— Ներս հրավիրեցեք,— խնդրեցի ես:

Ներս մտան երկու տիկին. մեկը երեսունին մոտ, կլոր դեմքով, պենսնեի տակից ժպտացող աչքերով ու անչափ բարի դեմքով մի կին, իսկ մյուսը... սատանան տանի, Հասմիկն ինքն է. ահա ինձ ծանոթ չարաճճի փայլը նրա սիրուն աչքերում, նույն երկար թարթիչները, նույն մեղմ, գրավիչ ժպիտը, բայց ավելի լուրջ, ավելի զուսպ: Դեմքը լցվել է, կզակի վրա մի փափլիկ, գեղեցիկ ծալք է ավելացել ու հասունացել, բացվել է այդ տիկինն իր ողջ փարթամությամբ:

Չնայած ճիգ գործադրեցի անտարբեր և անծանոթ ձևանալ, սակայն նրանց ներս մտնելուն պես ներքին մղումով արագ ոտքի կանգնեցի և թագնված շփոթությամբ կմկմացի.

— Խնդրեմ... նստ... նստեցեք...

Նրանք սեղմեցին իմ պարզած ձեռքը և նստեցին գահավորակի վրա:

— Ի՞նչով կարող եմ օգտակար լինել ձեզ,— խոսեցի ես մի առանձին սիրալիրությամբ:

— Մենք եկել ենք ձեր աջակցությունը խնդրելու,— սկսեց պենսնեով կինը,— ես պտղաբուծական գոնալ կայանի նոր դիրեկտորն եմ (թույլ տվեք անհամեստ լինել և ներկայացնել ինձ և ընկերուհուս)—Արիադնա Յափուջյանը, Միջուրինի աշակերտուհիներից...

— Միջուրինի աշակերտուհիների՞ց,— ուրախ բացականչեցի ես նրան ընդհատելով,— դուք նրա աշխարհահռչակ փորձերին մասնակցություն ունեցե՞լ եք:

— Այո, ինչպես չէ... Ես ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատել եմ նրա ձեռքի տակ...

— Ես հենց ձեզ եմ փնտրում, շարունակեցե՛ք,— ուրախ ավելացրի ես:

— Ընկերուհիս՝ Հասմիկ Չախիրյանը նույնպես նոր է ավարտել,— Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան,— և գլխավոր գիտական աշխատող է մեր կայանում: Մենք գիտական բավական լուրջ պաշարով ենք եկել,— թույլ տվեք հայտարարել

անհամեստաբար,— ասաց նա ժպտալով և թեթև շիկնելով,— բայց աջակցության կարիք ունենք այդ պաշարը գործադրելու և մեր գյուղատնտեսությանը ծառայեցնելու գործում...

— Կոնկրետ ինչ աջակցություն կցանկանայիք,— հարցրի ես գողունի նայելով Հասմիկին: Աստվա՛ծ իմ, ինչքա՛ն է սիրունացել... Ինչքան քիչ բախտավորներ կան, որոնց բնությունը շոայլորեն օժտել է այսպիսի շքեղ գեղեցկությամբ:

— Կուզեի՞նք գործի վեր ածել Միչուրինի գաղափարներն այստեղ— Հայաստանում: Բայց ինչի՞ց սկսել դժվարանում ենք որոշել:

— Ահա ձեր գործողության ծրագիրն ընդհանուր գծերով,— ասացի ես՝ հենց նոր գրված խմբագրականը նրան մեկնելով:

Կինը տարակուսանքով նայեց թղթին, ապա վերցրեց այն և մեքենայորեն մեկնեց ընկերուհուն.

— Ներեցեք, ես հայերեն վատ եմ կարդում,— մեղավորի նման դիմեց նա ինձ:

Հասմիկն սկսեց աչքի անցկացնել խմբագրականը: Ես հետևում էի նրա դեմքի արտահայտությանը, սիրուն երկար թարթիչներին. աչքերի կկոցումից նրանք դարավել էին իրար վրա ու ավելի երկար, ավելի խիտ էին երևում: Նրա լուրջ դեմքը հետզհետե բացվեց, պայծառացավ և շատ տարիներ առաջ ինձ ծանոթ անուշ ժպիտը խաղաց նրա շուրթերին:

— Իսկապես այստեղ ասված է այն ամենն ինչ պիտի անենք մենք: Եվ ինչքան էլ պարզ է ասված,— ժողովրդական լեզվով,— դիմեց ինձ ժպիտով:

Հոգիս թնդաց այդ շոյող դիտողությունից:

— Թերթը կաջակցի ձեզ բարոյապես. նա ձեր իդեաների լավագույն ազդեցությունը կլինի և ուտքի կհանի կոլխոզային գյուղացիությանը՝ մեր երկրի լերկ վայրերը ծառաստաններով ծածկելու համար: Գրեցեք թերթում այդ հարցի շուրջը: Նյութական մեր աջակցությունը կլինի Հողժողկոմատի առաջ հարց դնել՝ Ռուսաստանից միչուրինյան տնկիներ բերելու համար միջոցներ տրամադրել, ծառատունկ կազմակերպել,— խոսեցի ես:

— Հիանալի է,— աշխուժացավ պենսնեով դիրեկտորը,— բայց մինչ այդ պետք է ուսումնասիրել մեր անտառագուրկ վայրերի կլիման, հողը, օդի ջերմությունը, նայել տեսնել ինչ ծառեր են աճում այնտեղ, և ըստ այնմ էլ որոշել, թե Ռուսաստանի ո՞ր երկրամասից բերել տնկիները, — առարկեց Արիադնան:

Միբունիկս գլխով հավանության նշան արավ:

Ես վճռական մի շարժումով վեր կացա և ասացի.

— Խմբագրության ավտոմեքենան ձեր տրամադրության տակ է: Վաղը և եթե մեկնում ենք Սևան, իսկ հետո Լենինական: Մեր լեռնային երկրի բնությունը ես լավ գիտեմ, ես կուղեկցեմ ձեզ:

Ինձ թվաց, թե Հասմիկի աչքերում գազանի հրճվանքի մի շող երևաց ու իսկույն նորից թագնվեց նրա թավշյա հայացքի խորքում:

— Դուք, իհարկե, այդ վայրերը լավ կհմանաք, — ասաց Հասմիկը վեր կենալով, — չէ՞ որ գյուղացիական թերթի և ամսագրի խմբագիր եք հավանաբար գյուղատնտեսական բարձր կրթությամբ...

— Ո՛չ այդ պատճառով... Ես կրթություն չունեմ... ես պարզապես որսորդ եմ, ուստի և ծանոթ եմ մեր երկրի բնությանը, — վրա բերի ես:

— Որսորդ... ինչ կենդանիներ եք որսում, — հարցրեց նա՝ չարաճճիորեն փայլեցնելով աչքերը:

— Սիրուն եղնիկներ և գեղանի այծյամներ, — իրոնիայով պատասխանեցի ես:

— Բախտ կունենանք ձեր որսորդական շնորհքը տեսնելու... Բայց (նա անվճռական կերպով կանգ առավ):

— Շարունակեցեք:

— Գիտե՞ք ինչ, եթե կարելի է ինձ համար էլ հրացան վերցրեք, — թախանձեց նա, — ես մի ժամանակ լավ կրակող եմ եղել և զենքի սիրահար, որքան էլ տարօրինակ թվա այդ ձեզ համար...

— Տարօրինակ չէ, ես այդ գիտեմ... Ես հիշում եմ ձեր գիժ պատանեկությունը:

— Ինչպե՞ս, դուք ճանաչո՞ւմ եք ինձ, — գրեթե բացականչեց նա հուզմունքով:

— Այո... ջահել ժամանակս մեծ ազդեցություն եք ունեցել ինձ վրա:

Ծիծաղեցինք:

— Բայց ես ձեզ չեմ հիշում... ներեցեք... Բայց ինչո՞ւ չեմ հիշում, դուք այդպես շուտ չէիք մոռացվի...

— Այն ժամանակ ես ձորումն էի՝ կիսախավարի մեջ, իսկ դուք բարձունքում, շողերի մեղ ողողված: Դուք ինձ նկատել չէիք կարող, բայց մենք բոլորս տեսնում էինք ձեզ այն բարձունքի վրա...

Նրան թվաց, թե հեզանք կա այդ իմ խոսքերի մեջ և չքացավ նրա զվարթությունը:

— Այդպես, վաղը մեկնում ենք,— հայտարարեցի ես ձեռքս մեկնելով:

— Երբ նրանք դուրս եկան, ես ձեռքերս շփելով շրշում էի առանձնասենյակում ու ինքս ինձ խոսում:

— Հիանալի գաղափարներ ունի այդ ծերուկը: Կա՞ ավելի մեծ բավականություն մարդուս համար, քան տխուր, մերկ ու ժայռոտ լանջերը ծիծաղկոտ այգի դարձնելը... Այն էլ նրա հետ, նրա, իմ պատանեկական ցնորքների միակ առարկայի, նրա հետ, որին մի ամբողջ տասնամյակ գաղտնի պատասպարել եմ իմ հոգու մի անկյունում...

3.

Սևանը հյուսիս-արևելքից պարսպող Այծեմնասարի հողի ծալքերում նրանք հին ու հոյակապ անտառի հետքեր գտան: Հենց հողի վերին շերտերն այդտեղ կազմված էին փտած տերևներից ու անհետացած անտառի հումուսից:

Ինձ համար այժմ լիովին պարզ է, որ արևկող այդ լանջերում ծառերի շատ տեսակներ կաճեն: Իմ միտքն այժմ դրանով չի զբաղված: Այժմ ես կլանված եմ միայն մի հարցով,— ինչպես մոտենալ ծովափին իջած վայրի սագերի երամին:

Նրանց պահապանն ահա մի բարձր տեղ կանգնած արթուն հսկում է: Ես կուզեկուզ առաջ եմ գնում, տեղ-տեղ փորսող եմ տալիս և ծոծրակիս զգում եմ նրա թափանցող հայացքը:

— Ղա՛, ղա՛, ղա՛... երամն աղմուկով օդ բարձրացավ: Ես կրակեցի վայրի թռչուններին ամպի մեջ: Մեկը ցած ընկավ և ուժգին զարնվեց լճի հարթ մակերեսին՝ ամպից ոչ հեռու:

Ափ հանեցինք:

Անմիջապես խռիվ հավաքեցի, կրակ արի:

— Մոռացեք, որ գիտնականներ եք, թևներդ վեր քշտեցեք և փետրեցեք սագը,— դիմեցի նրանց՝ թփերից շամփուրացու կտրտելով:

Ես որսորդավարի խորոված արի և որսորդավարի էլ սկսեցի ուտել ու նրանց հյուրասիրել:

— Բոլորովին չի երևում, որ քաղաքի բնակիչ եք,— խուզարկու նայելով ինձ ասաց Հասմիկը: Երևի իմ առանց դանակ-պատառաքաղի խպշտելը նրան զարմացրել էր:

— Ես գոհ եմ ձեր այդ բնորոշման համար,— պատասխանեցի ես,— ու անչափ գոհ, որ իմ նահապետական-որսորդական գծերը չեն աղարտվել քաղաքում: Սա, ինձ թվում է չի հակասում ոչ կուլտուրականությանը, ոչ էլ խմբագրական աշխատանքին:

Նա գլխով համաձայնության նշան արեց,— բայց շարունակում է աչքի «պոչով» դիտել, ուսումնասիրել ինձ:

Ըստ երևույթին խմբագրի և որսորդի իմ մեջ եղած հակասությունն էր զբաղեցնում նրան:

Մենք հեռվից Սևան կղզու ժայռերի տակ մի մենավոր ծառ նկատեցինք և թիավարեցինք դեպի կղզին:

Ի՛նչ գմայլիչ է Սևան լիճը աշնան ջինջ կեսօրին... Արեգակը մի հսկա ռենտգենյան ապարատի նման լուսավորում է լճի խորքերը, նրա որովայնը և երևան բերում նրա ներքին աշխարհը: Ահա ավազը փայլփլում է լճի հատակին, ձկները երամներով լողում են ու փայլեցնում իրենց կողերի թեփուկները:

— Այսպիսի ամայություն^օ ւն տարվա այս եղանակին... Եվ դա միմիայն անտառի բացակայությունից... Պատկերացնում եմ Սևանի վաղվա օրը. Լիճը շրջապատված է կանաչ պուրակներով, ծառերի ստվերները խաղում են ջրերի վրա, ու այդ ստվերներում սահում են մակույկները՝ երջանիկ զույգերով լի...

Արիադնան և՛ խոսում է, և՛ պենսնեի տակից երագուն նայում լճի առկայծող ջրերին:

Հասմիկը թախծոտ էր և ինքնամփոփ: Նրա միտքը թափառում է ինչ որ տեղ: Ես նոր նկատեցի, որ նա մտահոգ է, և այլևս չկա նրա պատանեկան աշխույժը: Տեսնես ինչեր է անցել գլխով այս 8—10 տարում:

Մենք ափ հասանք և ուղղակի դիմեցինք դեպի ծառը:

— Ծիրանի է,— զարմացած բացականչեց Արիադնան:

— Այս բարձրության վրա ծիրանի^օ,— ծովի մակերեսից որքան ենք բարձր,— դիմեց ինձ Հասմիկը:

— Որ թիվն է այժմ:

— Ճիշտ այդքան մետր էլ այս ծառը բարձր է ծովի, մակերեսից:

— Բայց ով է տնկել ծիրանին, ո՞ւմ մտքով կանցներ այս բարձունքում ծիրանի տնկել,— խոսեց Արիադնան ինքն-իրեն, մտախոհ:

— Ոչ-որ,— պատասխանեցի ես:— Երևանից ուխտ կամ քեֆի եկած մի ծերուկ, կամ մի ջահել կին, կամ ցնորամիտ մի աղջիկ—դա միևնույնն է, հետը բերած ծիրանը կերել է և կորիզը շաքտել է ժայռից ցած: Եվ այս արևկող տաքուկ անկյունում, աճել է ծիրանին:

— Աճել է հատկապես նրա համար, որպեսզի հաստատի Միչուրինի կարծիքը,— չկա վայր, որ չաճի ծառը: Մենք այլևս ուսումնասիրելու կարիք չունենք: Եթե այս բարձունքում

ծիրանին աճել է, ապա նախալեռնային գոտու բոլոր բույսերը հիանալի կգարգանան Սևանի ավազանում: Վճռված է, գործի պիտի անցնել,— ոգեվորված խոսեց Հասմիկը: Նրա աչքերը փայլում էին ներքին կրակից, որ մի պահ բոցավառվեց իր ջահել օրերի նման, բայց հետզհետե հանդարտվեց, մեղմացավ:

Մենք Սևանից վերադարձանք մեր գործի ապագայի վառ հեռանկարներով:

Հաջորդ օրը նրանք թերթում տպագրելու հանձնեցին Սևանի ծառագարդմանը նվիրված մի հոդված, իսկ երեք օր անց մեկնեցին Լենինականի սարահարթն ուսումնասիրելու:

Երկու շաբաթ անց թերթի նախաձեռնությամբ և Հողժողկոմատի աջակցությամբ ծառատնկման մեծ կամպանիա ծավալվեց գյուղերում:

Այդ օրերին Հասմիկի դեմքը վառվում ու աչքերն առկայծում էին իր ջահել ժամանակվա նման: Նա նույն աշխուժ, կենդանի, ժպտուն աղջիկն էր, երբ դաշտում կոմերիտական խմբերի հետ տունկեր էր տնկում: Բայց քաղաքում, իր ոգևորության տեղատվության պահին նրա աչքերում ու արտահայտիչ դեմքին ես կարողում էի այն նորը, խաղաղ այն թախիծը, որ ոչ մի կերպ հաշտեցնել չէի կարող այդ կենսախինդ բնության հետ:

— Տեսնես վիշտ ո՞ւնի այս աղջիկը,— և ինչ վիշտ կարող է ունենալ, երբ բնությունը նրան ոչինչ չի խնայել,— մտածում էի ես ու հանելուկը լուծել չէի կարողանում:

4.

Մոտ մեկ ամիս ես նրան չէի տեսել: Անսպասելի հանդիպման առաջ բերած հույզերի ալիքն անցել էր և ես հանդարտվել էի: Ծառատնկման գործն ավարտվել էր, վրա էր հասել ցրտաշունչ ձմեռը և ես առիթ չունեի նրան տեսնելու:

Մինչ ես հազար ու մի միջոցներ էի մտածում նրա հետ տեսնվելու, մեկ օր անձանոթ ձեռագրով մի ծրար ստացա: Բաց արի և կարդացի հետևյալ երկտողը.

«Հարգելի պարոն Վահագն,

Վաղը իմ որդու ծննդյան տարեդարձն է: Խնդրում եմ ներկա լինել տարեդարձի առթիվ կազմակերպվելիք խնճույքին, որ տեղի է ունենալու երեկոյան ժամը 8-ին՝ իմ բնակարանում: Հասցես Շուկայի փողոց № 18
Ջեզ հարգող Հասմիկ Չախիրյան»

Ես նորից կարդացի երկտողը և անձանոթ մի ուրախություն ալիք տվեց ներսումս: Ուրեմն նա ինձ չի մոռացել... Ուրեմն ես գոնե մի փոքր անկյուն գրավել եմ նրա սրտում... Թե՞ քաղաքավարությունից դրդված է գրել: Հավանաբար հրավիրում է որպես խմբագրի, չէ՞ որ ես տպագրում եմ նրա հոդվածները, աջակցում: Ուրիշ ինչ կարող է լինել... Ա՛, հիշեցի,

ի՛նչ հիմարը, ի՛նչ միամիտն եմ եղել ես,— չէ՞ որ նա երեխա ունի, հետևաբար և ամուսին, իսկ ես հիմարաբար երագում եմ...

Տրամադրությունս անմիջապես ընկավ և թուլացած ու թեվաթափ նստեցի գահավորակին ու գլուխս առա ափերիս մեջ:

Երեխայի տարեդարձը... տեսնես ով է ամուսինը՝ այդ երջանիկ մարդը: Նա ուրեմն ուրիշի գրկում է, մայր է և կին... Անկասկած հավատարիմ կին: Նո՞ւ, ինչ կա որ, ինչու չուրախանալ այն բանով, որ նա ամուսին ու երեխա ունի... Ի՛նչ վայրենի բնագղներ ունի երբեմն մարդս, ինչու որդը կրծում է սիրտս այն մտքից, որ նա ամուսին ունի...

Ես ինձ շատ նախատեցի բայց այդ չիանգարեց, որ վերցնեմ հեռախոսի փողակը, գանգահարում Պտղաբուժական գոնալ կայան և ուղղակի ասեմ նրան.

— Ներեցե՛ք, վաղը երեկո ես զբաղված եմ, խնջույքին գալ չեմ կարող...

Ինձ թվաց, թե նա սառավ՝ փողակն ականջին հպած:

— Ինչպես կամենաք,— պատասխանեց նա ու ինձ թվաց, թե նրա ձայնը խեղդվեց կոկորդում, ու կախեց փողակը:

Ես մինչև երեկո ման եկա Զանգվի ձորում ու կռիվ մղեցի իմ ներսում վեր ելնող մի նոր զգացմունքի դեմ: Նա երեխա ունի...

Այն անորոշ հաճելի զգացմունքը, որ իմ մեջ փայփայում էի վերջին երկու ամսում, հանկարծ խամրեց, անէացավ: Իսկի հանե՞լ էք ծովում լողացող մեղուզան, որ ջրի մեջ շողշողում է ծիածանի յոթ գույներով: Հանեցեք— և ձեր ձեռքում դժգույն ու լպրծուն մի մասսա կմնա... Ի՛նչպես դժգունացան իմ երագները ծովից հանած մեղուզայի նման...

Ներքին ծանր պայքարից հոգնած, ես տուն վերադարձա և այնտեղ գտա որսորդ ընկերոջս.

— Անուշավան,— դիմեցի ես նրան,— այնուամենայնիվ պետք է մի սյուրպրիզ սարքել: Մենք չենք գնա, բայց կուղարկենք նրանց մի քարայծ և «Արարատի» հին գինիներից: Թող խմեն ու հիշեն անբախտ որսորդիս...

Նա ըստ երևույթին չհասկացավ և զարմացած նայում էր ինձ: Ըստ երևույթին ես այդ րոպեին տարօրինակ տեսք ունեի— գառանցող մարդու տեսք:

— Ո՞ւմ համար տանենք քարայծը... Ո՞վ խմի...

— Մ՛ւ՛ս, զենքերը պատրա՛ստ, հաց և ջրաման վերցրու... հետո կիմանաս...

Ես նստել եմ բա՛րձր-բարձր ժայռի գլխին ու նայում եմ իմ ոտների տակ փռված Արարատյան դաշտին: Դեղին եղեգնուտների միջով ոլոր-մոլոր արծաթե գոտի կապած հոսում է Արաքսը:

Միրոս լիքն է տրտմությամբ. ինձ թվում է, թե ուրախության մի կաթիլ էլ չկա հոգուս մեջ: Ինչ է պատահել ինձ...

Լեռան հանդիպակած լանջից հրացանի որոտներ լսվեցին: Ես սթափվեցի ու վազեցի կրակոցների ուղղությամբ: Մարի գորշ լանջով գորշագույն կենդանիների մի հոտ է սլանում հողմի արագությամբ, — այծյամներ են: Նրանց մեջ այստեղ-այնտեղ հարվածում են գնդակները: Մեկը խրտնած ետ ընկավ դեպի ինձ: Քարի հետևն անցա: Իմ թաքստոցից ես լավ տեսնում եմ նրան: Եկել ինձնից մի տասնյակ քայլ հեռավորության վրա կանգնել ու շփոթված դեռ-դեռ է նայում: Հրացանը մեկնեցի, նշան եմ բռնում: Իմ խշրտոցից շուտ եկավ — ինձ է նայում: Ինչպիսի՛ տագնապ կա նրա սիրուն աչքերում: Եվ ինչպիսի՛ գողտրիկ կազմվածք ունի, ինչպիսի՛ նրբակազմ իրան... կարծես նա է կանգնած առաջու տաս տարի առաջ: Հիշում եմ՝ մի անքամ տաս տարի առաջ Ջանգլի ժայռերի գլխին կանգնած ձորին էր նայում: Իսկ ես ծառի խիտ սաղարթների մեջ ծածկված հայացքով հետևում էի նրան: Այդ էր իմ միակ վայելքն այդ տարիներին: Ներքնից մի խումբ դատարկապորտ տղաներ դեպի նա էին մազլցում՝ գեշ դիտավորությամբ: Նա քարից քար թռչկոտելով ցած իջավ և ես մոտիկից, շատ մոտիկից, սաղարթների միջից տեսա երկյուղը նրա սիրուն աչքերի մեջ: Ճիշտ այս աչքերը, ճիշտ սրա նման անմեղ, միամիտ ու տագնապով լի...

Նշան եմ բռնում: Սատանան տանի, ձգանը քաշել չեմ կարող, — այս ինչքա՛ն նման է նրան, տարիների միջից իմ պատանեկական հուշերի միջից կարծես նա է վեր ելել ու աղերսող հայացքով ինձնից կյանք է խնդրում: Ես թափով վեր ելա ու հրացանս օդում թափահարելով գոչեցի.

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...

Այծյամը ծլունկ եղավ ու ահագին թռիչքներով սարն անց կացավ: Նրա հետևից Անուշավանն ապարդյուն կրակեց ու նախատինքով ինձ է նայում:

Իսկ ես քարի գլխին կանգնած քրքջում եմ իմ ներսում հանկարծ գլուխը բարձրացրած անզուսպ ուրախությունից:

— Լավ, ինչի՞ փախցրիր, — հարցնում է նա վրդովված:

— Չտեսա՞ր, ինչքան նման էր նրան, — պատասխանեցի ես դեռ անզուսպ ժպտալով:

— Ո՞ւմ:

— Հասմիկին:

— Գրողի խելք է է՛...

Ու մրթմրթալով գնում է իր սպանած քարայծի «փորը թափելու»:

Միամիտ, պարզասիրտ տղա է, բայց ափսոս ինձ չի հասկանում...

6.

Դեռ ցերեկով մշակը այծյամը և մի տակառիկ հին գինի տարել է Շուկայի փողոցի & 18 տունը, հանձնել է Հասմիկի մորն ու ասել.

— Հասմիկի ընկերներն են նվեր ուղարկել տոնի առթիվ:

Այժմ երեկո է: Այժմ հավանաբար շատ ենթադրություններ են եղել այծյամի և գինու շուրջը: Ո՞վ է այդ խորհրդավոր մարդը, որ լեռներում հեծնում ու տազնապով շրջել է, անցել է վտանգներով և, ըստ երևույթին նպատակ է ունեցել սրտում: Եվ ինչո՞ւ չի երևում այդ խորհրդավոր մարդը:

Անշուշտ այսպես են այժմ մտածում նրանց տանը և նա երևի վառվում է հետաքրքրությունից: Այդ լավ է, թող մեկ օր էլ նա ինձ նման ցնորքներ ապրի, ես նրան կստիպեմ թեկուզ մեկ օրով վերադառնալ իր գիժ պատանեկության տարիներին:

Դուրսը խավար գիշեր է, իսկ ներսում տոնական պայծառ լույսեր են վառվում: Ահա մեծ սեղանի շուրջը բոլորած հյուրերը: Դրսի խավարի մեջ թաղված լուսամուտից անհանգիստ հայացքով նրան եմ փնտրում: Ինձ կյանքի չափ հետաքրքրում է նրա տրամադրությունը: Կարո՞ղ է պատահել, որ նա, այս ուրախ տոնին, իր բալիկի տոնին, տխուր լինի... ինձ համար, իմ բացակայությունից...

Էլի գառանցում եմ: Ո՞վ եմ վերջապես ես նրա համար, նա արդյոք հիշո՞ւմ է իմ գոյությունը: Ու ինքս վրդովվում եմ իմ դեմ՝ իմ այդ մեծամիտ ենթադրությունների համար: Եվ ինչու էլ պետք է տխրի նա իմ բացակայությունից: Մենակ ես եմ, որ հիմարաբար անրջում եմ նրա մասին:

Ահա և նա: Մի ձեռքը ծնոտին հենարան դարձրած՝ պատուհանից դուրս է նայում: Նայում է մեզ ապակե հայացքով—պարզ է, որ ոչինչ չի տեսնում: Այնպես շաղված է նայում նա և այնպես անտարբեր է սեղանակիցների նկատմամբ: Դուռը բացվեց — նա իսկույն սթափվեց և նայեց դռան կողմը: Ներս մտավ մի կին: Նա էլի նույն դիրքն ընդունեց: Ու ամեն անգամ դուռը բացվելիս նա սթափվում ու նայում էր դռան կողմը: Մի շատ աներես ու համարձակ միտք անցավ գլխովս՝ «ի՛նձ է սպասում...»: Ապա նորից նախատեցի ինձ:

Հետաքրքրական է, ով է նրա ամուսինը այս մարդկանցից: Երանի դիմացս նստած պեպենոտ ու մեծ բերանով մարդը լինի: Ի՛նչ վայրենի ցանկություն... Ես ի ծնե բարի մարդ եմ, ինչո՞ւ այսպիսի անմարդավայել բաներ են անցնում գլխովս... Ինչու հենց հիմա ուրախ

եմ, որ նա թախծոտ է ու ցրված: Կարծես գաղտնի մի հույս գլուխ է բարձրացնում սրտումս...

Գնանք մոտիկից տեսնենք: Ես այլևս ուժ չունեմ այստեղ դրսում կանգնելու: Նա ինձ չի սպասում: Ես կմտնեմ և հայացքով կխուզարկեմ նրան արագ, հապճեպ և իսկույն կբռնեմ նրա զգացմունքները, որ պետք է տեղահան լինեն իմ անակնկալ հայտնվելուց:

Դեհ, ուրեմն ներս խուժենք: Դուռը վերևից ապակեպատ էր: Այդ ապակիների միջից խուզարկու աչքս հառած նրա դեմքին, դուռը ուժգին բախեցի: Նա վեր թռավ (այո՛, վեր թռավ, ես դա նկատեցի) և արագ քայլերով մոտեցավ դռանն ու լայն բացեց.

— Վա՛հ, դո՛ւք եք, — գրեթե ճչաց նա մեզ շենքում տեսնելով, և ժպտաց այնպես լայն, այնպես պայծառ, ինչպես մեր Ղազախի մայիսյան բնությունն անձրևից հետո: Ես նկատեցի, որ նա դժվարանում է զսպել իր հանկարծական ուրախությունը:

Սիրտս թնդաց, — ահա թե ինչու էր նա ստեպստեպ դռներին նայում:

Մեզ համար պատվավոր տեղ բաց արին սեղանի վերին ծայրին և նոր ուժով տաքացավ քեֆը:

7.

Խնջույքի պահին ինձ համար ցավալի մի բան պարզվեց, — Հասմիկը մի դժբախտ պատահարով զրկվել է ամուսնուց: Հասմիկն ա՛յրի, — ի՛նչ ցավալի է... Բայց սատանան տանի, այս ինչ տմարդի, չարանենգ ձայն եմ լսում հոգուս մի անկյունից, — կարծես ամոթից թագնված ուրախություն կա սրտումս, — չարանենգ ուրախություն... Ինձ թվում է, որ անկեղծ կարեկցությունից բացի ինչ որ տմարդի բան գլուխ է բարձրացնում ներսում: Ո՛հ, այդ երկվությունը, դաժան որսորդի և կարեկցող մարդու համակեցությունը միննույն կրծքի տակ... Այդ երկվությունը ողջ կյանքում ուղեկցել է ինձ և ես դրանից ազատվել չեմ կարող: Ասում են, որ ես բարեհոգի եմ ու անտարբեր չեմ այլոց վշտի հանդեպ: Բայց և ինչպի՛սի սառնասրտությամբ եմ ես արյուն թափում, — այդ անմեղ ու սքանչելի կենդանիների արյունը: Եվ ահա բարու ու չարի այդ երկվությունը արտահայտվում է իմ մեջ տարբեր ձևերով: Այս դեպքում ահա այսպես. երբ ես ներս մտա, կարմրաթշիկ մի երեխա ըստ երևույթին «հոբելյար» առաջ վազեց, ապա կանգ առավ ու մորը կամաց հարցրեց. «Պապա՞ն է»: Հասմիկը խիստ կարմրեց ու սաստեց երեխային՝ «Ո՛չ... սո՛ւս...» Ապա ձեռքը մեկնեց ինձ: Ես քարացա: Ինձ համար հանկարծ պարզվեց, որ երեխան հայր չունի, պարզվեց Հասմիկի հետ կատարված ողբերգությունը: Ես շանթահարված կանգ առա:

Բայց և ներքին չարախինդ մի ձայն — երևի դաժան որսորդի ձայնը — սկսեց փսփսալ «Ի՛նչ լավ է, որ նա հիմա ազատ է...» Ես աշխատում եմ խեղդել այդ ձայնը, բայց նա կա այնտեղ, մի ինչ որ անկյունում...

Ինձ այդպես էլ ներկայացրին հյուրերին՝ «Ամեն ինչով ընկեր Ասլանյանն աջակցում է մեր նախաձեռնությանը՝ Միչուրինի գաղափարները մեզ մոտ մարմնավորելու գործում...» Եվ

Էլի ուրիշ բաներ: Ուրախ վայլս են նվագում, զույգերը պարում են գլխապտույտ: Նա չի մասնակցում պարերին և այլևս չի լսվում նրա զրնգուն ծիծաղը... Ինչքա՛ն է փոխվել... Այս երեկո նա առանձնապես թախծոտ է: Ինձ թվում է, իր մանկիկի ծննդյան տոնը նրան և՛ անսահման ուրախացնում է, և՛ անսահման տրտմեցնում:

Երբ սկուտեղներով մատուցեցին այծյամի խորովածը, իմ դիմաց նստած շիկահեր մի տիկին ինձ և Հասմիկին փոխեփոխ նշանակալից նայելով, ասաց,— բայց ի՞նչ անխիղճ մարդիկ են որսորդները...

Բայց Անուշավանը տեղին վրա բերեց.

— Ներեցեք, դա բոլորին չի վերաբերում:

— Ո՞ւմ օրինակ...

— Ա՞յ, էսօր առավոտ մի այծյամի պատահեցինք: Խելոք կանգնել է: Ընկեր Վահագնը փոխանակ կրակելու— դալմադալ արավ-փախցրեց: Ասում եմ՝ ինչի փախցրիք: Ասում է՝ մեղք է, թող գնա ապրի... Բա դա խիղճ չի՞...

Աղջիկը խուզարկու նայեց ինձ, ապա մորը դառնալով բացականչեց.

— Մայրի՛կ, գտա՛նք, գտա՛նք. ահա թե ովքեր են որս ուղարկել մեզ... Էլ ձեզ չի հաջողվի կեղծել... Այո, միք փորձի,— ընդհատեց նա ինձ աշխուժանալով ու աչքերը չարաճճիորեն փայլեցնելով,— այդ հենց դուք եք եղել, էլ ով գիշերը լեռ կբարձրանար մեր տոնի պատվին...

Ու հրճվանքով, բարձր էքստազի մեջ բացականչեց.

— Դեհ, ուրեմն, դատարկենք մինչև վերջին կաթիլը մեր որսորդների կենացը, այն բանի համար, որ նրանք այծյամի կյանքը խնայեցին և այն բանի համար, որ մի այլ այծյամի զոհեցին իմ փոքրիկի պատվին...

Բոլորը ոտքի կանգնեցին:

Ես ամբողջովին կլանված էի նրանով,— ահա նա, վերջապես գտնվեց նա, տաս տարի առաջ կորցրած իմ եղնիկը... Իսկ և իսկ այժմ նա է—կենսախինդ, կրակոտ աչքերով, թովիչ ժպիտներով, կյանքն ինքը մարմնացած: Մի ժամանակ ինչքա՛ն էի փափագում բռնել նրա հայացքը, ինչքան էի ուզում, որ նա ժպտար ոչ թե ընդհանուրին, այլ գեթ մեկ անգամ ինձ, հատկապես ինձ: Այժմ նա լի ու լի ժպտում է հատկապես ինձ և ինչպի՞սի երախտիք ու զգվանք կա նրա սիրուն աչքերում, երախտիք հավանաբար այն բանի համար, որ ես մեծարել եմ իր որդուն իմ որսորդությամբ:

8.

Ծերուկ Միչուրինը նորից հանդիպելու առիթ տվեց մեզ: Կիրովական քաղաքի կենտրոնում տեղացիներից մեկի պարտեզում մի գառամյալ ու հսկա խնձորենի կա: Բնության բոլոր արհավիրքների առաջ կանգուն է այդ ծառն անհիշելի ժամանակներից և տալիս է իր անմահական պտուղները անպատմելի առատությամբ:

Գիտնական այգեգործների մեզ ծանոթ խումբը մեկնեց Կիրովական՝ այդ ծառը տեղում ուսումնասիրելու, ծանոթանաու նրա պտուղներին և այդ տեսակը տարածելու մեր երկրում:

Հունվարի մի արևոտ օր մենք մտանք այն պարտեզը ուր այդ ծառն է:

— Մի ամբողջ տնկարան կհիմնենք այս գարնանը միայն այս խնձորենու սերմերից, — ուրախ բացականչեց Հասմիկը՝ նարնջագույն ու հոտավետ խնձորները ճամպուկներում տեղավորելով:

Մեզ անհրաժեշտ էր այցելել նաև նորատունկ ընդարձակ այն այգին, որ հիմնվել է Վարդանյու գյուղից վերև՝ նախկին սովերախիտ անտառի տեղ:

Մեկնեցինք:

Թե ինչպես նոր մարդը նվաճում է բնությունն ու իր կարիքներին ծառայեցնում նրա անսպառ հնարավորությունները, մենք շատ ցայտուն կերպով տեսանք Վարդանյուից վերև:

Այդտեղ մի քանի տարի առաջ խիտ ու մթին անտառներ էին: Թավուտներբւմ վխտում էին եղնիկներն ու արջերը: Մարդը ամեն աշնան հատում է անտառը այդտեղ, հողը մաքրում ոլորապտույտ արմատներից ու դալար ոստեր տնկում: Անտառը քշվում է դեպի վեր և լեռան ստորոտներն ու լանջերը, ձորակներն ու բլրակները ծերպերն ու արահետները բռնում են 3 — 4 տարեկան մատղաշ խնձորենիներն ու տանձենիները, շարք կանգնած ու պատվի բռնած գանգրահեր մանուկների նման:

Այդ տարի մատղաշ տնկիները առաջին բերքն էին տվել՝ խոշոր ու խնկահամ պտուղներ:

— Այ մարդ, էս արջանոցում էլ բա՞ղ կքցվի — մեզ գանգատվեց այգու պահակ Մացակ ամին, ահագին մորթե փափախը գլխին ու մի հին «բերդան» ուսին զցած: — Միրգը հասնում է թե՛ չե՛ թփուտներից դուրս են գալիս ու գիշերը բաղը լցվում է՛լ արջ, է՛լ կխտար, է՛լ աղվես, — ու եկողը տանում է... Էդ անտեր արջերը ետի ոտների վրա կանգնում են, էս պուճուր ծառերը ծերից ծալում (դե սրանք էլ երեխու չափ բաներ են) ու միրգը խժռում: Հազար անգամ ասեցի էս քոլի միջին բաղ չի ըլիլ — լսող չեղավ:

— Բա դու ինչ լոռեցի ես, որ արջերին անպատիժ ես թողնում, — դիտմամբ գրգռեցի էս Մացակ բիձուն:

— Էս աղջիկներն էստեղ չլինեին — դրան լավ պատասխան կար, — բեխի տակ ժպտալով պատասխանեց Մացակ բիձեն: Տո, աներես են, աներես: Ամեն գիշեր տասը տասնհինգ

հետ դրմբացնում եմ «բերդանս» — էլի բանի տեղ չեն դնում, հալբաթ սրանք էլ են գլխի, որ պառավել եմ...

Ծիծաղեցինք:

Իզուր է գանգատվում Մացակ քեռին, այդ այգուց ոչ միայն արջերն են լիանում, այլև մարդը: Հենց առաջին տարվա բերքը կրելով չէր վերջանում:

Մեր միջուրիսյան այգեգործների համար մի ծով հարստություն բացվեց այդտեղ, — ինչքա՛ն տնկիներ կային տեղին հարմարված...

Տարված այդ անօրինակ, կիսավայրենի այգիով, ես չէի նկատել, որ Անուշավանն անհետացել է:

Միայն լեռան ծերպերից լսվող կրակոցից հասկացա, որ նա մեզ որսի խորովածով հյուրասիրելու պատրաստություն է տեսնում:

Բոլոր տեսակներից էլ նմուշներ վերցնելուց հետո, երբ պատրաստվում էինք վերադառնալու, Անուշավանը մեզ բոլորիս հրավիրեց մոտակա ձորակը:

Այդտեղ մի թեժ կրակ «խանձում էր աստծու ոտները», իսկ սպանված եղնիկը մեկնված էր նրա կողքին, ձյան վրա:

Անմիջապես դալար ոստերից շամփուրներ պատրաստեցի, իսկ Արիադնան իր պենսնեի տակից հետաքրքրությամբ նայում է իմ գործողությանը: Ձորը լցվեց խորովածի ախորժեղի բուրմունքով և որսորդական մի քեֆ սկսվեց «Արարատի» անմահական խմիչքների, մասնակցությամբ: Քեֆին հետևեցին հին գյուղական խաղերը, աթուրման, ձնագնդին, ապա հրաձգությունը:

Այդ կոպիտ ու անտաշ խաղերը, խարույկն անտառում, խորովածն առանց ավսեի, մեր նախնիների ուրախության այդ պարզ ձևերը պետք էկան այդտեղ: Եվ ես ամբողջովին սուզվել էի որսորդի ու լեռնականի իմ տարերքի մեջ: Երեի այդ էր պատճառը, որ Հասմիկը գաղտագողի գննում էր ինձ ու երբեմն էլ տարակուսանքով ուսերը թոթվում:

Ես ձյան վրա քսանհինգ քայլ չափեցի և բարակ ճիպոտը Հասմիկի ձեռքը տալով — պատվիրեցի՝

— Անշարժ կանգնեցեք:

Ապա վերադարձա տեղս ու չոքեցի ձյան վրա: Հրացանի փակադակի չրխկոցից նա ցնցվեց, ճիպոտն սկսեց թեթևակի տարուբերվել: Կատակ չէր, ուղղակի կրակելու էի վրան:

Ես դիմեցի նրան այսպիսի պաթետիկ խոսքերով.

— Միք վախենա, ձեր կյանքը շատ թանգ է ինձ համար... ուղղակի վստահեցեք ձեր կյանքն ինձ ու թողեք ձեզ վրա կրակեմ:

Նա շիկնեց, նայեց ինձ ճառագայթող հայացքով ու վճռական ասաց.

— Վստահում եմ, կրակեցեք...

Ու ճիպտոր բոլորովին մոտեցրեց դեմքին:

Այնուամենայնիվ ես նրան սիրտ տալու համար կեղծեցի՝

— Գնդակը վերև է գնալու, ճիպտի ծայրին եմ նշան բռնում, մի՛ք վախենա:

Ու կրակեցի:

Նա նայեց ճիպտի անվնաս մնացած ծայրին ու հեզնեց.

— Որսո՛րդ, որսո՛րդ, չարաչար վրիպեցիք:

— Նայեցեք, ձեր քթի առաջ:

Նա երկյուղով տեսավ, որ գնդակն անցել է գրեթե իր հոնքերը խանձելով և զջլել է ճիպտի մի կողը: Ի՛նչ խելացնոր է լինում սիրահարված արարածն իր պատանեկության տարիներին... Ի՛նչ սոսկալի բան կլիներ, եթե գնդակը մեկ երկու մատնաչափ շեղ գնար...

Ցնծությունը ընդհանուր էր, իսկ Անուշավանը ուրախությունից գլխիկոնձի էր տալիս փափուկ ձյան մեջ:

— Եվ որպեսզի դա պատահականության արդյունք չհամարվի, պետք է երկրորդ հարվածով ճիպտը կտրել նույն տեղից,— հանդիսավոր կերպով հայտարարեցի ես ու չոքեցի:

Աղջիկը վստահ և ուրախ նախկին դիրքն ընդունեց: Արիադնան փորձեց ետ կանգնեցնել ինձ այդ խելագար մտադրությունից, բայց արդեն ուշ էր,— հրացանը որոտաց, որին հետևեց մի սուր ճիչ ու աղջիկը փովեց ձյան վրա:

Ես առաջ վազեցի, արյուն տեսա նրա դեմքին և... այլևս ոչինչ չեմ հիշում...

9.

Ես նստած եմ նրա մահճակալի մոտ: Ճերմակ փաթաթանը միայն նրա քթի արմատն է ծածկում:

Չարաճճի աչքերով նայում է նա ինձ ու հարցնում.

— Վահագն, ինչու դու այդքան գիժ ես:

— Աչքերդ ինձ գժվեցրին, ես մեղավոր չեմ:

— Բայց դու ուղիղ աչքերիս վրա կրակեցիր...

— Ախր, տասը տարի դրանք ինձ հանգիստ չեն տվել, ինչպես չկրակեի ես դրանց վրա,—
փորձում եմ արդարանալ ես:

— Իսկ եթե շեղումն ավելի՞ շատ լիներ...

— Երկրորդ գնդակով ինձ վերջ կտայի...

Նա գզվանքով նայում է ինձ ու հավանաբար մտածում է՝ «Ինչ խենթն է սա»...

— Բայց վրիպեցի՞ր... ծաղրեց նա կատակով,— էլ չպարծենաս, թե լավ որսորդ եմ:

— Վրիպեցի, այո, բայց դրանից շա՛տ շահեցի— մի ամբողջ կյանք շահեցի, մի անկրկնելի
երջանկություն...

Ու կարոտով, տաս տարվա կարոտով համբուրեցի նրա պայծառ աչքերը...

10.

Գարունն իր ալ ու ալվան ծաղիկներով, իր քաջան ջրերով, իր դայլայլող թռչուններով
հովիտներից ու ձորերից դեպի լեռներն է բարձրանում:

Սևանի լերկ ափերին, Շիրակի անտառագուրկ դաշտերում, մեր երկրի լերկ լեռներում
փթթում են դալար միջուրիկնյան տունկերը ու նրանք կայտառ են և կենսուրախ մեր
գանգրահեր մանուկների նման:

Ես շրջում եմ այդ վայրերը, նայում զարդարվող ու կերպարանափոխվող բնությանը և
կուրծքս ուռչում է ուրախությունից:

Նա մասն ունի այս մեծ կերպարանափոխության մեջ և նա սիրում է ինձ, նա մեր տանն
է...

Մենք թևանցուկ ու մեղմ զրուցելով ընթանում ենք միջուրիկնյան տունկերի շարքերի միջով:
Մեր առաջից թռվոտով վազվզում են թիթեռնիկների հետևից մեր մանուկները՝
միջուրիկնյան տունկերին հասակակից, նրանց պես մատղաշ ու թարմ:

Ես կաթոգին նայում եմ Հասմիկի ճառագայթող պայծառ աչքերին ու մտածում՝

— Ի՛նչ հրաշալի մարդ է եղել այդ ծերուկ Միջուրիկը...

Ուշացած խոստովանություն

Ես չէի համարձակվում մոտենալ նրան: Այնքա՛ն բարձր, այնքան անհասանելի էր նա ինձ համար: Գեղեցիկ գլուխը հպարտորեն բարձր պահած, խոշոր սև աչքերի նայվածքը վերից վար, արհամարհական, միշտ լուրջ ու խստադեմ այն աղջիկը ակնածանք էր ներշնչում մեզ՝ գյուղական պատանիներին: Ինձ միշտ թվում էր, որ մի անհագին վիհի մյուս բարձրադիր ասից է նայում նա ինձ, և ես գիտեի, որ այդ վիհը երբեք չի լցվելու: Նա կրթված էր, սիգաճեմ, ճաշակով հագնված: Գյուղաքաղաքի ազդեցիկ մարդկանցից մեկի միակ դուստրն էր, ուստի և մեծամտացած ու երես առած: Տասնևչորս տարին դեռ չլրացած, նա արդեն լուրջ օրիորդի տեսք ուներ և իր առավելությունները գիտակցող էակի գուսպ վեհություն: Գյուղաքաղաքի «ֆրանտ» երիտասարդության կովածաղիկն էր նա, իսկ մեր՝ տավարած պատանիներին երազանքի առարկան:

Մենք նրան սիրում էինք հեռվից, վարից վեր, քաշվելով ու անհամարձակ, անհույս, առանց ակնկալության, հետևապես և առանց մրցության ու ինտրիգների: Բայց սիրում էինք լեռնեցի պատանու անարատ սիրով: Մենք արտաքուստ կոշտ–կոպիտ էինք, բրդյա հագուստով, մագոտ տրեխներով, մոթալ փափախով, արևվառ դեմքերով ու ճաքճքված ձեռներով: Բայց մեր լեռնային սքանչելի բնությունն այնքա՛ն գեղեցկություններ էր ամբարել մեր ներսում... Ինձ թվում է, թե այն ժամանակ մեր սարահարթերում ինչքան ծաղիկներ կային, բույրից էլ բացվել էին իմ հոգում, և ամեն առավոտ ջինջ լազուրից անմահական ցող էր իջնում նրանց վրա: Ինձ թվում է, որ այն ժամանակ իմ պատանեկական ալեկոծ հոգուց ես լսում էի մեր լեռնային առվակների կարկաչը, և ջրվեժների շառաչունը... Ես ծնվել էի վրաններում, մեծացել հորթերի հետ, սնվել անտառներում, նիրհել բացօթյա, աստղերի տակ: Ես բնության մի մասնիկն էի, նրա անտաշ մի բեկորը, ուստի և նրա բարեմասնություններով օժտված:

Հովիվ մարդը երազող է լինում: Գուցե դրա պատճառն այն է, որ նա հեռու է քաղաքի ժխորից և նրա երևակայության թռիչքը չի խանգարվում: Բնության անդորր ու վսեմ խաղաղության մեջ, նրա հեքիաթային պատկերների ազդեցությամբ, երանության ժպիտը դեմքին երազում է հովիվ պատանին՝ իրեն անծանոթ պայծառ ու լուսավոր ասիերի մասին ու իր հոգու խորքում գուրգուրում է նրան՝ իր երազանքի առարկային: Լուսածագից մինչև աղջամուղջ լեռան ծաղկոտ լանջին պառկած, ես կլանում էի հոշակված սիրային վեպերը: Ու միշտ էլ իմ կարդացած գրքերի հերոսուհիները— և՛ կապուտայա Լիզիան «Հո երթաս»-ում, և՛ «Անգլուխ ձիավորի» Լուիզան, և՛ Մանոն Լեսկոն,— բոլորը, բոլորը ինձ պատկերանում էին այն սևաչյա աղջկա կերպարանքով, — սև, ալիքավոր մազերը, վերև սանրած, գույգ փարթամ հյուսերը մինչև գոտին, թուխ աչքերի նայվածքը լուրջ ու խաղաղ:

Երբեմն ես սարից ցած էի իջնում, գնում գյուղաքաղաք ուսումը շարունակող իմ նախկին ընկերներից գիրք խնդրելու: Տավարածի իմ պայուսակը գրքերով լի էս անցնում էի դպրոցի առաջից, կոթնում էի ցանկապատին ու հաստափոր վեպը բացում,— ընդմիջումին, երբ դուրս գա բակ, թող տեսնի, թե ինչպիսի գրքեր եմ կարդում, թող իմանա, որ ես թեկուզ և տավարած եմ, բայց սիրում եմ գիրքը...

Զանգը հնչելուն պես դպրոցի դռներից դուրս էր հորդում խայտաբղետ պատանիների հորձանքը՝ աշխույժ ու աղմկոտ: Բոլորից հետո, սիգաճեմ քայլերով դուրս էր գալիս նա, աչքերը թեթև կկոցելով, մի հայացքով թեթևակի ընդգրկում էր բակն ու մինչ ընկերներն աղմուկով խաղում էին, նա լրջադեմ ու սառը պատասխանում էր իրեն շրջապատող «ֆրանտ» պատանիների հաճոյախոսություններին: Ոչ մի ժպիտ, քնքշության ոչ մի նշան,— ինչքան ժլատն է, ինչքան անմատչելի: Պատահում էր, որ նա նայում էր իմ կողմը: Այդ բոլորներին ես արյանս զարկն զգում էի քունքերումս, դեմքս հրդեհվում էր, ուզում էի թագ կենալ նրա հայացքից: Իսկ նա այնպես սառն էր, անտարբեր.... Ինձ թվում էր նույնիսկ, որ նա ինձ չի նկատում, նայում է ոչ թե ինձ, այլ այն ծառի բնին, որին մեջքս հենում էի ես:

Այն ժամանակ սիրտս դառնությամբ լիքը, ես շտապում էի դեպի մեր լեռները, հեռանալու մարդկանցից, առանձնանալու բնության գրկում՝ իմ մտքերի ու երազների հետ:

Ուսման ծարավը լափում էր ինձ: Կարիքը, անողոք կարիքը ստիպել էր հորս հանել ինձ դպրոցից և ուղարկել ձմեռանոց՝ տավար պահելու: Ես հոգուս խորքում ձմեռանոց էի տարել ուսման կարոտը և այն աղջկա կարոտը: Այդ կարոտը ուռճանում, կլանում էր ողջ էությունս:

Ես դեն նետեցի իմ գերանդին, վրդովված հորս մենակ թողի խոտհարքում և իջա գյուղ:

Չոր ու ցամաք, բարակ ու ոսկրոտ, անչափ բարի դեմքով իմ ուսուցչուհին անման հոգի ունի: Նա իրենց տանը վերապատրաստեց ինձ աշնան քննություններին:

Աշնանը ես քաղաք իջա գյուղացի տղայի անվստահությամբ:

Քննությունների ժամանակ իմանալով, թե ինչ գրքեր եմ կարդացել, ուսուցիչները զարմացան: Հայերեն լույս տեսած գրեթե բոլոր գեղարվեստական գրքերը կարդացել էի տավարած ժամանակս: Բայց անկարգ, վայրիվերո: Այնուամենայնիվ սիրտս թնդում էր ուրախությունից,— վերջապես տարիների երազս իրականանում է — ես դպրոցումն եմ, գիմնազիայում, նրան այնքան մոտ...

Քննեցին ռուսերենից: Տուրգենևից մի փոքր կտոր կարդալ տվին «Щенок» վերնագրով: Կարդացի ու պատմեցի միջակ: Այդ «շչենոկ» կոչված փոքրիկ արարածին գտել են փողոցում, տարել են տուն, կաթ տվել, քնեցրել մահճակալում, մեծացրել: Չէ, այս էլ անցավ, հիմի սիրունիկս, դու կտեսնես, թե ինչ կա այս կարկատած շորերի տակ: Ես գիտեմ, որ ոչ սովորելու, այլ անհագ կլանելու եմ ուսումը,— այնքան ծարավի եմ նրան: Ու այն ժամանակ նա չի կարող մտքում ինձ չհամեմատել իրեն շրջապատող դատարկապորտ, անհոգ մեծացող և սվաղված արտաքինով տղաների հետ:

Հանձնաժողովը վեր կացավ, ուրախությունից ալեկոծվում եմ,— ընդունվեցի՝

Հանկարծ պենսնեի տակից մանր աչքերը փայլեցնելով մի ձեր ուսուցիչ հարց տվեց.

— Իսկ ինչ բան է շչենոկը:

Դե, լեռնական տավարածի մտքով կանցնի՞, որ շան ձագին մահճակալում կքնացնեն, այն ժամանակ, երբ նա ինքը կարպետ է գցում վրան ու բարձի տեղ քար կամ թնն է դնում գլխի տակ:

Առանց տատանվելու և հայկական կոպիտ առողջանությանը պատասխանեցի.

— Шенок — это маленки малчик .

Հենց այդպես էլ արտասանեցի,—կոպիտ, առանց փափկացնող հնչյունների:

Ուսուցիչներն իրար երես նայեցին և դիրեկտորն ասաց.

— Կտրե՛լ, ռուսերեն չգիտի...

Ինձ թվաց, թե առաստաղը շարժվեց, պատերը երերացին...

Կարգերը փոխվեցին և մենք՝ պարտիզաններս ցած իջանք լեռներից ու քարանձավներից:

Մակայն տարիներն անցնում էին և մեր միջև եղած վիհը խորանում էր ու լայնանում,— նրանք արդեն 8-րդ դասարանում էին և երևի վաղուց մոռացել էին իմ խղճուկ գոյության մասին: Իսկ ես խուզարկում եմ մեր գյուղի բոլոր «ձալոների» ու տատերի սնդուկները, պահարանները ու ինչ որ տպված թուղթ է ճանկս ընկնում—կարդում եմ: Ես կարդում եմ գյուղական խանութի՝ ապրանք փաթաթելու համար գործ անվող բոլոր տպագիր թերթերը, որոնք մեծ մասամբ բզկտված հին գրքերից են պոկած լինում: Եվ ծարավը, ուսման ծարավն ավելի է սաստկանում մեջս:

Անհույս ու փշրված սրտով ես իջնում եմ ամառանոցային գյուղաքաղաքն ու հեռվից նայում եմ նրան, ակնածանքով ու գաղտագողի: Ինչքա՛ն է սիրունացել, ինչպե՛ս բացվում է օրը օրին՝ լավ խնամված ծաղկի պես, և ինչպես այդ շքեղ ծաղկի շուրջը մեղուների, թիթեռների ու գեռունների մի բազմերանգ բազմություն է թրթռում... Երբեմն նա ինձ նայում է այնպիսի հայացքով, կարծես հեռագրասյունին է նայում: Դա խորապես խոցում է իմ սիրտը և ես նորից լեռ եմ բարձրանում, մազլցում ծերպերը որսի հետևից ու հրացանիս որոտով խլացնում վիշտս:

...Մենք քարայրը շրջապատեցինք և երկօրյա կովից հետո գերեցինք անվանի ավազակների մի խումբ: Ղազախում դա մեծ դիպված էր, և երբ մենք բանդիտներին շրջապատած գյուղաքաղաք մտանք, ողջ բնակչությունը խոնվեց մեր շուրջը: Եկան և դպրոցի աշակերտները: Սիրտս տրոփում է ուժգին,— հիմի նա կտեսնի ինձ՝ հրացանն ուսիս, վիթխարի ավազակապետի թիկունքում: Կզարմանա իմ սրտի վրա, թե ինչպես ե՛ս, իմ փոքր տեղով մասնակցել եմ այդ դաժան կովին: Ծերպերում փորսող տալիս փշերը չանգռել են իմ դեմքը և արյունը սառել է այտերիս: Ոչինչ, թող այդ էլ տեսնի... Եվ ահա եկավ նա, ահով նայեց բանդիտներին, թուուցիկ հայացք ձգեց մեզ՝ գյուղական կոմունարներինս վրա և շուտ եկավ գնաց:

Քիչ է մնում սիրտս պայթի թախիծից, անճարությունից: Ի՞նչ անեմ, ո՛ւժի բան չի, քաջության բան չի... Ձմեռային մի պայծառ օր հրացանն ուսիս, սպանաձու նապաստակը կողքիցս կախ արած, իմ հավատարիմ շունը հետևիցս զգած՝ քաղաք մտա: Նապաստակը ինձ գրքեր տվող ընկերոջս նվեր եմ տանում:

Դիտմամբ ցերեկով եմ գնում, որ նրան դպրոցում պատահեմ ու այնտեղ էլ հանդիսավոր կերպով հանձնեմ: Նա այնտեղ կլինի, անշուշտ մոտ կգա ու կզարմանա իմ որսորդական «հունարով»: Ու ես մտմտում եմ պատրաստի պատասխանը. «Էս ինչ է որ, կիստար էլ եմ սպանում, դու՛ր էլ եմ երկնքից վեր բերում...»: Նա կզարմանա ու հետաքրքրությունն առաջ կգա նրա մեջ դեպի այդ լեռնական պարզ պատանին: Կհարցնի սարերից—կպատմեմ: Կասեմ, թե ի՛նչ չքնաղ տեսարան է բացվում ամեն արևածագի Այրի-դաշ բարձր լեռան կատարից, կպատմեմ մեր բնության հեքիաթային գեղեցկության՝ կպատմեմ Հաղարծնի անտառի արջերի, Ճանճաքարի վայրի մեղրի ամբարների մասին ու կպատմեմ մեր սարերի անթիվ, անհամար ծաղիկների մասին: Նա կըլսի գլխահակ և կխորասուզվի իր մտքերի մեջ, կերազի: Այո՛, ես նրան իր ճղճիմ միջավայրից մտովին մի նոր աշխարհ կփոխադրեմ, բնության աշխարհը, ուր ամեն ինչ անպաճույճ է ու գեղեցիկ և ուր մարդիկ կոպիտ արտաքին ունեն և քնքուշ սիրտ...

Դպրոցի բակում աշակերտները խոնվեցին շուրջս:

Ես որսս հանդիսավոր կերպով հանձնեցի ընկերոջս այն պահին, երբ սևաչյա սիրունիկս «դեպքի վայրն» էր հասել:

Ընկերս ոգևորված իմ նվերից, փաթաթվեց ինձ ու զգացված արտասանեց.

— Շնորհակալ եմ... թանկագին նվեր է, որովհետև դրամով չի գնված, այլ ձեռք է բերված չարչարանքով ու տղամարդությամբ...

Ուրախությունից արյունս գլուխս խփեց և հրճվանքով մտածեցի. «Հիմի որ չես կարող ուշադրություն չդարձնել, սիրունիկս»: Ու աչքիս «պոչով» նայեցի նրան: Նա սիգաճեմ ու գլուխը բարձր պահած մոտեցավ մեր խմբին և առանց ինձ և իմ որսին ուշադրության արժանացնելու, մի կտոր ճերմակ խմորեղեն մեկնեց իմ շանը:

Շունը խորթ-խորթ ու անվստահությամբ նայեց նրան լեռնականի վայրենի հայացքով,— նրա համար խորթ էին այդ աղջկա թափանցիկ նրբին շորերը ու նրանից փչող անուշահոտությունը:

Ես հայացքով թույլ տվի շանս, և նա ազահությամբ բերանեց քաղցրավենին ու բարեկամաբար սկսեց պոչով ավլել գետինը: Աղջիկը համարձակություն ստանալով՝ սկսեց շոյել նրա գլուխը, և այդ պահին ես նրա դեմքին առաջին անգամ լուսաշող մի ժպիտ նկատեցի ու աչքերում գգվանք: Կարծես կանաչ-թավշե բլրին արևածագի ուրախ շողեր խաղացին, կարծես ժպտաց ինքը՝ Ղազախի մայիսյան առավոտը: Խիստ ու մռայլ այդ դեմքը այնպես պայծառ շողաց դեպի այդ կենդանին ունեցած սիրուց, որ մի պահ մնացի հիացմունքից ապշած այդ արտասովոր գեղեցկության առաջ: Ապա հաջորդ վայրկյանին

տակալի մի միտք, անբացատրելի մի խանդ շամփրեց ուղեղս, «Մի՞ թե իմ մեծ սիրով այս շան չափ էլ ուշադրության չարժանացա...»

Այդ տարօրինակ մտքից ինձ թվաց թե սիրոս կանգ առավ, աշխարհ գլխիս պտույտ եկավ և խելահեղ մի ցասումով բռնված, ես հրացանը վզիցս հանեցի տենդագին ու որոտացի ահավոր ձայնով.

— Հեռացե՛ք...

Ու կրակեցի իմ մանկության ընկերոջ, իմ սիրելի շան ճակատին...

Ապա խելագարի վազքով սլացա դեպի անտառ, նետվեցի թփերի մեջ և երեսս խոնավ հողին քսելով՝ դառնագին ու անգուսպ հեկեկացի:

Ես կրակ էլ էի իմ առաջին սիրո վրա ու նրա ողբերգական մահն էի ողբում՝ իմ պատանեկան անարատ հոգու ամբողջ ուժով:

Իմ գիժ, իմ գիժ պատանեկություն, որ մեր ջրվեժների նման փրփրադեզ էիր ու մեր եղնիկների նման թեթևասույր:

Հորդացած գարնան ջրերի նման զգացմունքներս դուրս էին գալիս իրենց ափերից ու արմատահան անում—տանում եզերքին բուսած ծառ ու ծաղիկ, կանաչ ու թուփ: Բողար ջան, մայիսի շաղոտ լուսաբացի և աշնան անձրևոտ գիշերների իմ ընկեր: Դու էլ գոհ գնացիր իմ գիժ զգացմունքների գիժ հորդումին: Ու ինձ թվում է, որ նրան գոհ գնաց և իմ առաջին սերը, որ փթթում էր շա տ վտանգավոր տեղ— իմ հոգու լեռնային հեղեղատի ափին...

Այդ դեպքից քսան տարի անցավ; Հորդացած ջրերը հանդարտվեցին և ես դարձա չափավոր ու խոհուն: Կյանքը խուզեց երևակայությանս թևերը և նա այլևս չի ճախրում ամպերից վեր,— նա ներքևում է— երկրի վրա...

Ու այժմ ես հաճախ եմ հարցնում ինքս ինձ՝ «Մի՞ թե ես որևէ կայծ չեմ առաջ բերել այդ աղջկա հոգում»: Ու հարցնում եմ ինքս ինձ՝ «Տեսնես, կարեկցության մի շող գոնե անցա՞վ նրա հոգով— կարեկցություն ոչ թե սպանվողի, այլ իմ նկատմամբ,— չէ որ նա հասկացավ, անշուշտ հասկացավ, որ ես կրակում եմ ի՛մ սրտին և ե՛ս եմ կարեկցության արժանի իմ փոթորկվող հոգով...»

Ու մեկ էլ հարցնում եմ՝ «Կա՞րոյոք նա, հիշո՞ւմ է ինձ»...

Ինչ վերաբերում է ինձ, ես եռանդով վանում եմ նրա հիշատակն իմ սրտից ու ինչքան եռանդով եմ վանում, այնքան պայծառ է կանգնում նա իմ մանկության օրերի հուշերում:

...Վերջերս Երևանում ես երբեմն հանդիպում եմ մի անծանոթ տիկնոջ: Կլոր երեսով, թուխ աչք-ունքով, փարթամ իրանով գեր մի կին է դա: Քայլվածքը նախկին վեհության կնիքն ունի, սիրուն աչքերը մռայլ են ու թախիծով լի: Ես ժպիտ չեմ տեսել այդ տիկնոջ դեմքին:

Չնայած դրան նա բավական հետաքրքրական է և ինչ-որ հմայք ունի,— թաքուն, անհասկանալի հմայք,— դժվարանում ես որոշել այդ հմայքի աղբյուրը:

Բարեկամուհիս ինձ ծանոթացրեց նրան:

— Ես վաղուց գիտեմ ձեզ,— ասաց տիկինը գրեթե անտարբեր:

— Որտեղի՞ց:

— Կյանքից... գրքերից... հետո՝ մենք հայրենակիցներ ենք:

— Բայց ես ձեզ չեմ տեսել:

— Դե դուք բարձունքում եք, մենք ստորոտում... դուք մեզ համար տեսանելի եք, մենք ձեզ համար ոչ: Նրա պատասխանն ինձ կոպիտ թվաց: Բայց նա մի փոքր իրավացի է,— ո՛ր է մնացել ծակ տրեխներով նախկին տավարածր...

— Դուք ձորում էիք մեզ հետ: Ապա հանկարծ հետ թողիք մեզ, անցաք, — հնիհն դեպի կատարն էիք շտապում, — ի՞նչ էր պատահել ձեզ, — հարցրեց նա խուզարկու հայացքով ինձ զննելով:

Ինչ որ խորհրդավոր էր խոսում այդ տիկինը:

— Շատ բան էր պատահել... Պատահել էր այն, որ այլևս ստորոտում մնալ չէր կարելի, որովհետև վեր գնացողները և՛ արհամարհանքով էին ցած նայում, և՛ երբեմն էլ քար էին գլորում դեպի ցած...

Տիկինը դեմքը խոժոռեց, հանդիմանանքով նայեց ինձ և կտրուկ պատասխանեց.

— Դա ճիշտ չէ...

Բայց ո՞վ է նա, ո՞րտեղից գիտե, թե ինչ եմ ակնարկում ես...

Իր սենյակում ես նայում էի սեղանին դրված ալբոմը: Եվ ահա այնտեղ հանկարծ ես գտա նրա լուսանկարը և անակնկալից այլայլվեցի: Ահա կանգնած է նա բարակիրան, իր գեղանի հասակով, սև աչքերով, փարթամ հյուսերը կախ: Ես նայեցի գեր, կլոր դեմքով տիկնոջը և նրա աչքերը ինձ անչափ ծանոթ թվացին,— կարծես այս տիկինը նրա հարազատ մայրն է կամ ավագ քույրը: Ես թափով վեր ելա ու գրեթե գոչեցի.

— Դուք նա՞ եք...

Նա ժպտաց և ես երկրորդ անգամ տեսա նրա ժպիտը,— կարծես մռայլ ամպի քողը ետ քաշվեց և թույլ ճառագեց աշնանամուտի արևը:

— Այո, նա՛ եմ... զարմանում եմ, որ չճանաչեցիք:

— Ախր շատ էք փոխվել... միայն աչքերը... այո, նույնն են:

Ես կարկամած զննում էի նրան, հետզհետե հիշողությանս մեջ վերակենդանանում էր քսան տարի առաջ կորցրածս թանկագին էակը և նմանությունը հետզհետե մեծանում:

— Այո, նա էք... Բայց շա՛տ տարբեր էք նրանից... Նա շատ հպարտ էր, հինգ տարի ես սիրեցի նրան և նրա մի բառին, նրա մի հայացքին անգամ չարժանացա... արտասանեցի ես ցավով ու խուլ բողոքի շեշտով:

Տիկինը ժպտաց, շառագունեց և ասաց ջերմությամբ.

— Դուք իզուր սպանեցիք ձեր շանը... դուք առիթ չունեիք նրան նախանձելու, որովհետև... որովհետև ես ձեզ իրոք սիրում էի... Ես այն ձե՛զ էի շոյում, ձե՛զ էի գուրգուրում... դուք այդ չհասկացաք...

Ասաց ու խոստովանությունից խիստ կարմրեց:

Ես ցավից խորը հառաչ արձակեցի և ինձ թվաց, թե իմ ողջ էությունը լցվեց անհուն ավստոսանքով: Ավստոսանք, սրտամորմոք ավստոսանք իմ իզուր կործանված առաջին սիրո համար, իմ կորցրած Բողարի համար և մեր անցած-գնացած ջահելության համար...

Իմ գիժ, իմ գիժ, ջահելություն, որ երագուն էիր ու խաղաղ՝ Ղազախի ամռան աստղազարդ գիշերի պես, ու սանձակոտոր լեռնային հեղեղի նման...

Որսորդի դատաստանը

Մարագի ներսից դուռը ծեծեցին:

— Էն ո՞վ ա,– ձայն տվեց պահակ Ակոփը՝ դռանը հրացանի կոթով խփելով:

Ներսից մեկն աղաչական ձայնով խոսում էր գերմաներեն:

— Մի արի տես ի՛նչ ա ասում, գիտնական բալա,— ձայնեց լոռեցի որսկան Ակոփը պահակային ջոկի ամենաերիտասարդ և ամենակրթված մարտիկին՝ Աշոտին:

Աշոտը սովորել էր Լյուքսեմբուրգի (Վրաստան) գերմանական դպրոցում, տեղական գերմանացիների հետ շփում էր ունեցել և գերմաներեն բավական գիտեր:

«Գիտնական բալան» մթնում խարխափելով առաջ եկավ և գերմաներեն ձայն տվեց.

— Ի՞նչ էք ուզում:

Գերմանացին ինչ-որ բան ասաց:

— Ի՞նչ ա ուզում:

— Ասում է՝ թողեք մի բոպեով դուրս գամ, բնական կարիքի համար,— թարգմանեց Աշոտը:

— Ասա ինչ դալաթ անում ես է՛դտեղ արա,— կտրուկ պատասխանեց Ակոփը:

Տղան թարգմանեց:

Գերմանացին աղաչում էր:

— Ակոփ քեռի, ասում է կողքիս կին կա, անհարմար է, թե աստվածդ կսիրես թույլ տուր դուրս գամ: Իրոք գերիների հետ մի գերմանացի սանիտարուհի կար: «Քեռի Ակոփը» մի պահ մտածեց:

— Որ օղլուշաղ կա, դժար ա... պետք ա մի բան անենք:

— Ինչ բան, հո դուրս չենք թողնի:

— Հլա մի ասա, որ դուրս թողնեմ չես փախչի՞:

Աշոտը թարգմանեց:

Գերմանացին աղաչական տոնով, կերկերուն ձայնով ինչոր բաներ ասաց: Նրա ձայնն այժմ ցածից էր գալիս, ըստ երևույթին չոքել էր:

— Քեռի Ակոփ, ասում է, երդվում եմ մինուճար երեխուս արևով, մորս գերեզմանով, որ դուրս կգնամ ու էլի խելոք կգամ, մարազը կմտնեմ: Բայց դրա օձի լեզվից չխաբվես, քեռի Ակոփ:

— Խի՞, նա մարդ չի՞ որ,— խոսեց որսկանը:

— Մարդ է, բայց թշնամի է:

Որսկանը մտածմունքի մեջ ընկավ: Նա տատանվում էր: Նա դեռ թշնամի չէր տեսել, նա խոր հավատ ուներ մարդու նկատմամբ: Այդ հավատը մշակվել էր նրա մեջ Լոռու ձորերում, իրենց պապերի ազնվությամբ օժտված պարզասիրտ, բարի որսորդների ու անասնապահների միջավայրում:

— Բա կաթնատու մոր գերեզմանովը սուտ երդում կո՞ւտի,— հանկարծ հարցրեց որսկանը: Նրա տոնի մեջ նախատինք կար «թերահավատ ջահելների» նկատմամբ: «Ասենք իմ գյուլլի առաջից ո՞ւր պիտի փախչի»,— մտածեց նա:

Ու դուռը բացեց:

Շեմքում ցցվեց գերմանացու բարակ—երկար կերպարանքը:

— Ասա անմըդ ի՞նչ ա:

Աշոտը թարգմանեց:

— Հանս Հերման:

— Պա՛հ, ադա էդ հո մեր կոլխոզի չոբան Հանեսի անըմն ա: Հանե՞ս... էդ հո իսկական լոռեցու անուն ա,— պարզասրտորեն ուրախացավ Ակոփը:

— Դե որ ըտենց ա, այ Հանես, գնա էն ծառի տակն ու էլի թեզ ետ արի... համա երդումդ պինդ պահիր, հա ,...

Աշոտը թարգմանեց:

Գերմանացին գնաց ծառի տակը,— Աշոտը հրացանը մեկնած գնաց նրա հետևից:

— Այտա, ամոթ ա, թող էդ մարդը հալալ իրա բանին կենա,— նախատեց որսորդը:

Աշոտը կանգ առավ: Նա դժգոհ էր որսկանի ծայր աստիճան միամտության ու բարության համար:

Պահակապետն Աշոտին կանչեց և մի տեղ ուղարկեց: Որսկանը մնաց մենակ: Մթնում, ծառի կողմից թմփթմփոց լսվեց:

— Հանես պրծա՞ր,— հարցրեց լոռեցին:

Չայն չկա:

— Այտա, Հերմա՛ն:

Չայն չկա:

«Էդ բալեն մեռածը չլի՞նի ճղեց»,— ահով մտածեց նա և հրացանն առաջ մեկնած գնաց ծառի կողմը:

— Հանե՞ս... այտա, դե պրծի է՞:

Չայն չկա:

— Հանես հե՛յ,— գոռաց որսկանը լոռեցավարի ու. ինքն էլ սարսափեց իր ձայնից:

Հանեսը ո՞րտեղից...

Որսկան Ակոփին 5 օր բանտ նստեցրին՝ «կալանավորին բաց թողնելու համար»:
Ճակատում դա շատ մեծ հանցանք է և շատ ծանր պատիժ է ենթադրում: Բայց դե
գորամասում ո՞վ չէր ճանաչում լոռեցի որսկան Ակոփին, ով չգիտեր նրա միամտությունը:

Տարիքոտ որսորդին այս անգամ զիջեցին ու խրատեցին, որ թշնամու նկատմամբ իր
բարեսրտությունը մի կողմ դնի:

—Արա՛, գիտնական բա՛լա, ուրեմն էդ անխիղճը խաբեց էլի՛ ... ուրեմն մոր գերեզմանովը
սուտ երդվեց էլի ...— զարմացած ասում էր որսկանը հաջորդ օրերին:— Բա էդ անօրենը
չէր մտածո՞ւմ, որ ես իրեն պատճառով կկորչեմ... էդ էլ իմ լավությունն ա՞ ...

Եվ դառնացած զուխը տարուբերում էր ու «ծլթծլթացնում»:

— Աշխարքի բաներին մտիկ է՛, տես մարդիկ ինչքան են փչացել...

Խեղճ մարդը դեռ ծանոթ չէր երկոտանի Բորենիների արյունարբու վարքուբարքին:

Ջորամասը կռվով առաջ էր գնում:

Ուկրաինական մի գյուղի մոտ շատ դիակներ կային թափթփված: Քիչ առաջ այստեղ մեծ
կռիվ էր տեղի ունեցել: Մեկը ձյան մեջ արյուն տալով քարշ էր գալիս դեպի գյուղի ծայրին
մեն-մենակ կանգնած տունը ու անծանոթ լեզվով բղավում:

Որսկանը մոտ գնաց:

— Այտա, էս հո չանեսն ա,— բացականչեց նա զարմացած:

Վիրավորը, մարդուն ճանաչելով՝ սարսափեց: Հավանաբար մտածեց, որ իր վերջը եկել է:

— Աշոտ հե՛յ, ադա չանեսին գտել եմ, մի դեսն արի է,— գոռաց որսկանը ետ նայելով:
Աշոտը մի վիրավոր կարմիրբանակայինի վերքն էր փաթաթում և գուցե նույնիսկ չլսեց էլ:

— Լա՛վ ճանկս ընկար, պարոն չանես, էս հիմի քեզ տիկ կհանեմ,— փնթփնթաց որսորդը
հրացանը լցնելով:

Գերմանացին ձեռքերը վեր տարածած պաղատում էր:

— Հը՛, կաշիդ թանգ ա չէ՞ ... բա, աննամուս, իսկի մտածում էիր, որ քո պատճառով
որսկան Ակոփին բերթ են նստեցնելու: Ես քո էդ սուտ երթում ուտող լեզուդ պետք է
քոքահան անեմ:

Ու վրդովված որսորդը սվինը մեկնեց:

Հերմանը հողը լիզում էր ու ինչ-որ բաներ ասում աղաչական ձայնով ու իր թարմ վերքերն էր ցույց տալիս:

«Ասենք, վիրավորին սպանելն էլ մի տղամարդություն չի, օրենքն էլ է արգելում»,— մտածեց Ակոփը և նրա բարկությունն սկսեց հետզհետե իջնել:

«Հիմի արդեն ճանկերիս մեջն է, առաջ անեմ տանեմ»,— մտածեց նա ու հրացանը ետ քաշեց:

— Դե լա՛վ, լավ, դանչանք մի անիլ, չեմ սատկացնիլ... դուք որ մարդկություն չունեք, գիտեք թե մենք էլ չունե՞նք...

«Յարալու որսը միշտ ջրի վրա է վազում», — հիշեց որսկանն ու ջրամանը դեմ արավ գերմանացուն:

— Ինչ դալաթ արել ես արել, առ խմիր:

Գերմանացին վախվիսելով վերցրեց ջրամանը, գլխին քաշեց ու միանգամից դատարկեց: Ապա պատյանից դուրս քաշեց ատրճանակն ու մեկնեց թե չէ, որսկանը վրա թռավ, իլեց ձեռքից:

— Նամա՛րդ, էդ ի՞նչ բանի ես,— գոռաց նա:

«Չէ, սա անպայման զինաթափ էր ըլում... Ես էլ ախմախավարի կարծեցի, թե ուզում ասպանի...»—մտածեց որսկանը: Մեղմացավ ու իր վիրավոր գերուն օգնելով, առաջ մղելով գնաց դեպի մոտակա կենտ տունը:

«Խի՞, ո՞վ ա տեսել, որ իրան ջուր տվող, իրա սիրտը հովացնող մարդի արինը թափեն... Չէ՛, իմ աչքիս էսպես երևաց... Բա ի՞նչ էր գազազած գելի պես մտիկ անում վրես, հ՞ը...»— տարակուսանքով մտածում էր նա ճանապարհին:

Գյուղամիջից դեռ կրակոցներ էին գալիս: Այս ու այն տեղ պայթում էին արկերը:

Տանից մի ծեր կին դուրս եկավ:

— Այ մեր, մի սրա վերքը կապի, շտաբը տանեմ,— դիմեց կնոջը որսկանը:

Կինն ուսերը տարակուսանքով թոթվեց, ըստ երևույթին Լոռվա բարբառը նրա գիտակցությանը չհասավ: Բայց գերմանացու վերքը տեսնելով՝ նա ճղճղաց, ձեռքով— ոտքով նշաններ արավ և տան դռները կրնկի վրա բաց անելով՝ ցույց տվեց տան ներսը: Բնակարանը տակն ու վրա էր արված, ամանեղենը ջարդած, անկողինը, բարձերը գետնին թափթփված,— թալանի թարմ հետքեր:

Լոռեցին հասկացավ:

— Այ մեր, հո սա չի արել, սա ի՞նչ անի... յարալու իսան ա, մի շոր բեր փաթաթի...

Պառավը հետզհետե հանդարտվեց ու հենց նախասենյակում փաթաթեց զինվորի վերքը:

Որսկանը գոհ սրտով դուրս եկավ տնից և դես ու դեն նայեց: Բաց դաշտի կողմից մի խումբ գերմանացիներ գրոհում էին գյուղի վրա: Քարե ցանկապատի տակ կարմիրբանակայինները շարված անընդհատ կրակում էին գրոհի եկող խմբերի վրա: Որսկան Ակոփը պատի տակով կուզեկուզ առաջ վազեց, մի հարմար դիրք բռնեց ու սկսեց կրակել:

Փամփուշտը վերջացավ: Նա պայուսակից հանեց Լոռուց հիշատակ մնացած միակ «դում — դում» փամփուշտը: Լոռում նա ուներ այդ փամփուշտից, արջի որսի համար: Այդ փամփուշտը նրա հուշերը թարմ էր պահում, իր որսորդական քաղցր օրերի հուշերը»: Հենց դրա համար էլ Լոռուց բերել էր հետը...

Նա փամփուշտը դրեց փողի մեջ ու նշան բռնեց:

«Չէ՛, նամարդություն ա, սրանով մարդի վրա չեն կրակիլ,— մտածեց նա ետ քաշվելով:

Ինչ-որ տեղից մեր գնդացիները մի ակնթարթում հնձեցին գյուղի վրա գրոհող խմբերին: Դաշտում կենդանի մարդ չմնաց:

«Յարաբ ի՞նչ էլավ Հանեսը»,— մտածեց որսկանը, դեպի ծանոթ տունը քայլելով: Գնում էր իր գերուն շտաբը տանի:

Գյուղը կռվով մեր ձեռքն էր անցնում: Այս ու այնտեղ ծուխ ու բոց երևաց. նահանջող գերմանացիները հրդեհում էին տները: Ահա բոց է ժայթքում նաև ծանոթ տան պատուհանից:

— Պա՛հ, ես ձեր անօրեն...— ու մի ծանր հիշոց արձակելով՝ որսկանն առաջ վազեց:

Ծանոթ պառավը լեղապատառ դուրս թռավ տնից ու ճչալով դույլը ձեռքին վազեց դեպի ջրհորը: Մինչ որսկանը բակը կմտներ— կինը ջրով լիքը դույլը ձեռքին վազեց տուն, որ հրդեհը հանգցնի, բայց հանկարծ շեմքում փովեց:

— Էս ի՞նչ էր, այտա...

Նույն վայրկյանին շեմքում երևաց վիրավոր գերմանացին որևէ տեղից ճանկած մի հրացան ձեռքին:

Որսկան Ակոփի մեջ կարծես մի բան դղրդոցով փուլ եկավ և իր հետ կործանեց, տակով արավ նրա պապենական բարությունը: Եվ լռեցի որսկանը, որ իր կյանքում ոչ մի մարդու վատություն չէր արել, պայթուցիկ գնդակավոր փամփուշտը հանեց պայուսակից, տենդագին լցրեց հրացանը ու ահարկու ձայնով որոտաց:

— Նամա՛րդ...

Եվ նշան բռնելով՝ ձգանք քաշեց: Գերմանացու գանգի կտորներն օդը թռան . . .

— Ձեր բոլորիդ «դում-դում» գյուլլով պետք ա սասկացնել... անհոգի, նամարդ օձեր. . . — ասում էր որսկանը հատ-հատ, հուզմունքից դողալով:

Մանկապարտեզի դաստիարակչուհին

Ես վաղուց չէ, որ վայր եմ դրել տավարածի մահակը: Ամառանոցային կոկիկ այս քաղաքում ես սարից նոր բերած եղնիկի նման ամեն քայլափոխին դեռ-դեռ եմ նայում խրտնած: Ինչքա՛ն մարդիկ կան այդ ամառանոցում և ինչ տեսակ հագուստներ ասես, որ չեն հագնում: Բոլորն անծանոթ, բոլորն անմատչելի: Եվ ինչ զարմանալի կարգեր ասես, որ չկան, այդտեղ—մարդիկ անտառում փոխանակ թփուտներում վազվզելու՝ կոկիկ ճանապարհներով են քայլում, և ոչ ոք ծառ չի բարձրանում: Ծառ ու ծաղիկ պատած են փշալարերով, և ոչ ոք չի վազում կանաչի միջով ու չի թավալվում: Աթուրմա, լախտի խաղացող էլ չկա... Բնության մեջ լինել ու աթուրմա չխաղա՞լ ... Տարօրինակ է, շատ տարօրինակ ու անհասկանալի:

Քեռիս, որ աշխարհ տեսած, զարգացած մարդ է, Հանքային Ջրերի քարտեզը ձեռքս է սովել ու պատվիրել լինել բոլոր նշանավոր վայրերում: Բայց երեք օր է, ինչ այստեղ եմ և դեռ ոչինչ չեմ տեսել, այս ժխորից դեռ միտքս չի պարզվել, շփոթությունս դեռ չի անցել: Ամառանոցն ապրում է իր ուրախ կյանքով, էստրադաներում հնչում է Չայկովսկու դյուբիչ երաժշտությունը, աշխատավոր մարդն առողջանում ու բերկրանքով վայելում է այդ աննման ամառանոցի բարիքները, իսկ ես, անընկեր ու անլեզու, ամեն օր որոշ ժամերի վաննա եմ ընդունում, զանգի կանչով օրական ուտում եմ չորս անգամ, թփուտներում պառկած գիրք կարդում, իսկ իրիկնադեմին միայնակ սար եմ բարձրանում վերջալույսը տեսնելու: Ախ, այդ երկրի ծիրանագույն, դյուբիչ վերջալույսը...

Մի օր էլ վճռեցի հենց առաջին պատահած մարդուն ցույց տալ քեռուս տված քարտեզը և իմանալ, թե որտեղ են դրանք՝ իմ տեսնելիք վայրերը, և ինչպես կարելի է ընկնել այնտեղ:

Այգում, նստարանի վրա համեստ դեմքով մի տիկին նստած գիրք էր կարդում: Ռուս է: Ափսոս, որ ռուսերեն վատ եմ խոսում, և այդ է պատճառը, որ այստեղ ոչ ոքի հետ չեմ ընկերանում: Բայց միայն դա չէ, այլև իմ բնական ամոթխածությունը, հետամնաց գյուղի, նախկին տավարածի ամոթխածությունը, որ ես բերել եմ հետս մեր սարերից: Այդ ամոթխածությունն էր պատճառը, որ ես մի քանի օր առաջ Սև ծովի ափերից փախա Կիսլովոդսկ: Հազարավոր տղամարդ ու կին միասին լողանում էին ծովում և կիսամերկ փռվում ավազի վրա՝ կողք-կողքի. . . Իսկի տեսնվա՞ծ բան է դա. . .

Ու հիմա կանգնել եմ այդ տիկնոջ առաջ կարկամած ու ամաչում եմ նույնիսկ շուռ գալ, գնալ:

Նա գլուխը բարձրացրեց և հավանաբար իմ գեղջկական կարմրած դեմքից դրությունս հասկանալով, սիրալիր ժպտաց ու հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում, երիտասարդ:

— Ներեցեք, ես... ես... չգիտեմ ու՞մ դիմեմ... — կմկմացի ես:

— Նստեցեք և խոսեցեք համարձակ, դուք հավանաբար առաջին անգամն եք լինում ամառանոցում, — ասաց նա այնքան բարեկամաբար, որ ես սիրտ առած՝ նստեցի ու սկսեցի իմ կոտորտված ռուսերենով:

— Այո, առաջին անգամ... Մենակ եմ, ուզում եմ նշանավոր տեղեր տեսնել, բայց ցույց տվող չկա... ա՛յ, օրինակ Լերմոնտովի սպանվելու տեղը...

— Էլի ի՞նչ տեղեր կուզենայիք տեսնել, — հարցրեց նա հետաքրքրությամբ ինձ գննելով:

Ես պատասխանի փոխարեն ծոցիցս հանեցի քեռուս տված քարտեզը, որի վրա կարմիր մատիտով նշաններ կային արած:

— Քեռիս է տվել, որ գնամ, բոլորը տեսնեմ, — թոթովեցի ես:

Նա բարեսրտությամբ ծիծաղեց՝ ցույց տալով իր սիրուն ատամների ճերմակ շարքերը:

— Քեռի՛դ, որտեղա՞ցի է քեռիդ:

Ինչպես դուք կխոսեցնեիք թոթովախոս ու միամտաբար դուրս տվող մանկան, նույնպիսի հետաքրքրությամբ ինձ հարց ու փորձի ենթարկեց երկնագույն աչքերով, փոքրիկ, ձվաձև դեմքով այդ տիկինը: Իսկ երբ իմացավ, որ ողջ կյանքս սարերում, վրաններում ու ձմեռանոցներում է անցել, երբ իմացավ, որ որսի հետևից ամեն ձմեռ թափառում եմ անտառներում ու ձորերում, նրա հետաքրքրությունը բազմապատկվեց, նրա համար ես արդեն գյուտ էի կամ հազվագյուտ հետաքրքիր մի արարած այդ կուլտուրական ամառանոցում:

— Ո՞ւր կուզեիք գնալ այսօր, — հարցրեց նա վեր կենալով:

— Մեկ է, թեկուզ Լերմոնտովի մենամարտի տեղը: Կա՞սեք ինչպես գնամ:

— Ես կուղեկցեմ ձեզ, — ասաց նա և ավագ քրոջ մտերմությամբ թևս վերցրեց, ապա քիչ քայլելուց հետո ասաց կիսակատակ...

— Անշնորհք, թևանցուկ անել էլ չգիտե:

Ըստ երևույթին սաստիկ կարմրեցի, նա կանգնեց ու դեմքիս նայելով՝ ծիծաղելով ասաց.

— Ինչպե՛ս գույնն անմիջապես փոխում է . . . Է՛, երիտասարդ, լավ է, որ դեռ հոգով անարատ եք մնացել:

Մատանան տանի, թևանցուկ արած քայլել չեմ կարողանում, ինչպե՛ս քայլեմ, որ կողքին չքավեմ, ոտս ոտին չառնի, ա՛խ, իմ այս անձոռնի ոտքերը . . .

Ես բառեր ճարեցի մտքումս ու ասացի.

— Գիտե՞ք, ճիշտն ասած՝ ուղիղ տեղով քայլած չկամ, դժվար է ուղիղ տեղով քայլել... իսկ թևանցուկ առաջին անգամն է... ներեցեք...

Եվ թևը բաց թողեցի: Կարգին քրտնել էի:

Նա այնպես ուրախ քրքջաց, և այդ ծիծաղն այնքան զնգուն ու դուրեկան էր:

— Ի՛նչ հետաքրքիր արարած եք, աստված վկա, ես Մոսկվայում հարյուր հազար մարդ եմ ճանաչում, ոչ մեկը ձեզ նման չի:

Կարգին ծիծաղում է վրաս. երևի իրոք շատ անձոռնի արարած եմ...

Այդ օրը եղանք Լերմոնտովի մենամարտի վայրում: Գլխարկս հանեցի ու հուզմունքով նայեցի հանճարեղ պոետի արձանին:

Տիկինը թաքուն հայացքով զննում էր ինձ: Այս անգամ չծիծաղեց վրաս, ըստ երևույթին, չուզեց վիրավորել զգացմունքներս: Նա Լերմոնտովի «Դև»-ն արտասանեց կարծես իր համար, բայց հետզհետե հափշտակվելով:

Վա՛հ, այս ինչքա՛ն լավ, ինչքան երաժշտական է արտասանում: Սա անպայման ակումբներում արտասանելիս կլինի:

Վերադարձանք և բաժանվեցինք քաղաքային զբոսարանում: Բաժանվելիս հարցրի.

— Իսկ ձեր անունը կարելի՞ է իմանալ:

— Ինչ կարիք կա . . . միևնույն է, այլևս չենք պատահելու: Ասում է՝ չարաճճի հայացքով զննելով դեմքս, կարծես ուզում է իմանալ, թե ինչ տպավորություն կթողնի իր ասածը:

Ես մռայլվեցի:

— Բա քեռուս ասած մյուս տեղերն ո՞վ պիտի ցույց տա,— քրթմնջացի ես դժգոհ:

— Է՛, երեխա՛, երեխա՛, խռովել է՞լ զիտես,— հնչեց նրա երգեցիկ ձայնն ու զնգուն ծիծաղը: Նա ձեռքը մեկնեց ինձ ու մտերմությամբ ասաց, կարծես ինձ մխիթարելու համար.

— Նո՛ւ, մի՛ խռովիր, առավոտյան ժամը տասին եղիր այսօրվա հանդիպման վայրում:

Ես ուրախ սեղմեցի նրա ձեռքը, բայց ի՛նչքան նուրբ, ինչքան քնքույշ է այդ ձեռքը, որ այնպես անօգնական է պատսպարվել իմ ահագին թուխ ու կոշտ ափի մեջ:

Ես մի պահ կարկամել եմ: Նա հասկանում է, դեմքին կեղծ խիստ արտահայտություն է տալիս ու զգուշությամբ ձեռքը քաշում ափիցս: Մի պահ ձեռքս օդում մեկնված է մնում:

— Նո՛ւ, բարի գիշեր, մի՛ մոլորվիր,— լսում եմ նրա հնչեղ ձայնը:

Թեթև սրտով բարձրանում եմ աստիճաններով: Ի՛նչ լավն է, ի՛նչ բարի այդ տիկինը, անպայման մանկապարտեզի ուսուցչուհի կլինի,— նրանք սովոր են բոլորի հետ վարվել, ինչպես երեխաների հետ: Այնպե՛ս բարի են լինում մանկապարտեզի դաստիարակչուհիները:

Մյուս օրը, պայմանավորված ժամին ես մոտեցա ծանոթ նստարանին: Նա էլի երեկվա գիրքն է կարդում: Այնպե՛ս պայծառ, այնպե՛ս մտերիմ է ժպտում նա ինձ: Նույնիսկ ինձ թվում է, թե քրոջ կարոտ կա նրա հայացքում:

— Նո՛ւ, լա՛վ քնեցիր, չոբան,— հարցրեց նա կատակով,— Քեռիդ է՞լ ի՞նչ է պատվիրել: Ու ծիծաղում է զրնգուն, այնպես դուրեկան ծիծաղով: Եթե հնարավոր լիներ ձայնագրել այդ ծիծաղը . . .

— Քեռիս պատվիրել է, որ «Օդի տաճար»-ն էլ տեսնեմ:

Վեր է կենում, ձեռքս բռնում, ու տերրասներով վեր ենք բարձրանում:

Թիկունքից անտառապատ բլուրներ են բարձրանում, որոնց գագաթները բաց են ու ծածկված ալպիական կանաչով: Մենք դուրս ենք գալիս անտառից ու մտնում ծով կանաչի ու ծաղիկների աշխարհը . . .

Այդտեղ իսկապես ոչ մի «տաճար» գոյություն չունի, հենց ինքր ողջ բնությունը, այս չնաշխարհիկ բլուրները, ուր ստեղծագործ հուզմունք են ապրել ռուս ժողովրդի հանճարները՝ Պուշկինը, Լերմոնտովը, այս աննման վայրերն իրենք են «տաճար»՝ «օդի տաճար»...

Ես բնության զավակ եմ և կարիք չկա, որ սիրունիկ ուղեկցուհիս ինձ բացատրի, թե ինչն՞ է այդ վայրը կոչվում «օդի տաճար»:

Աշխարհ ու ընկեր մոռացած, տարված նայում եմ հեռո՛ւ, հեռու հորիզոնում մինչև ամպերն իրար վրա բարդ-բարդված, իրար թիկունքից ավելի ու ավելի վեր ելնող, մանիշակագույն մշուշով քողարկված Կովկասյան լեռներին: Նայում եմ Էլբրուսի ճերմա՛կ-ճերմակ գագաթին, և հոգիս, բնությանը սովոր հոգիս թռչում է դեպի այդ անձանոթ ու փառահեղ լեռնաշխարհը, դեպի Մեծ Կովկասի մթին ծմակները, ուր վխտում են եղջերվի նախիրներն ու այծյամների հոտերը:

Ուղեկցուհուս հայացքն ինձ է գննում, նա երևի ուզում է իմանալ, թե ի՞նչ է կատարվում իմ մեջ:

— Ա՛խ, այնտեղ լինեի՝ հրացանը ձեռքիս, գոնե մի շաբթով, գոնե մի շաբթով... գառանցողի նման շշնջացի ես:

— Ի՞նչ,— հարցրեց նա ականջը մոտեցնելով: Ես սթափվեցի ու թարգմանեցի ասածս:

— Ի՛նչ տարօրինակ մարդ ես, քեզ Մոսկվա պիտի տանեմ՝ Ակադեմիական Մեծ Թատրոնի դերասանների հետ ծանոթացնելու:

— Մոսկվա՞, Մեծ Թատրոն՞ . . . ի՞նչ գործ ունեք դուք այնտեղ:

— Կատակ եմ անում, ես Սիմֆիրսկի գյուղերից եմ:

. . . Մենք գառիվայրով ցած ենք իջնում:

Նա թեև պարզ շորերի մեջ է և հասարակ սանդալներ ունի հագին, բայց դժվարանում է:

Ներքևում, անդունդի վրա հաղարջի ու մոռի թփեր կան կախված:

— Գնանք, ի՛նչ կլինի, գնանք քաղենք,— թախանձեցի ես:

— Ի՛նչ, գժվե՞լ ես, այստեղից վայրի այծն էլ չի կարող իջնել,— ասում է նա ու երկյուղով նայում անդունդի հատակին, ուր կիսախավարի միջից լեռնային վտակի վշվշոցն է լսվում:

Այս անգամ էլ ես եմ ծիծաղում՝ կոպիտ ու լիաթոք:

— Էս հո իսկական կոկիկ մայթ է:

Ու մի քանի ուստյունով գառիվայրով ինձ ձորը նետեցի:

Նա բռնել է մի ճյուղից, ցած է կռացել, ու սարսափահար անդունդին է նայում ու կանչում.

— Ստյո՛պա, Ստյո՛պա . . .

Ի՛նչ զվարճալի է քաղաքի փափկասուն տիկիներին հետ վայրի թավուտում լինել:

Մոռի ու հաղարջի պտուղներով ծանրաբեռնված ճյուղերի մի ահագին խուրձ գրկած՝ գառիվայրով վերև եմ վազում, թեթև ուստոստալով, ուզում եմ զարմացնել նրան:

Ի՛նչ կարճ է օրը: Նորից արևը խոնարհվել է, ահա պռունկը կընկնի բլրին:

Մենք իջանք քաղաք:

— Ի՛նչ կլինի միասին գնանք ընթրիքի,— խնդրեցի ես:

Նա չգիտես ինչու, դժվարանում է:

— Ա՞յդ էլ քեռիդ է պատվիրել,— ասաց նա: Ու աչքերը, չարածճի աչքերը ծիծաղում են:

— Այո՛, քեռիս է պատվիրել... Ասել է՝ ռուս աղջիկների հետ ման կգաս, որ ռուսերեն սովորես:

— Լա՛վ, որ քեռիդ է պատվիրել, գնանք,— ասաց նա ծիծաղելով,— բայց այն պայմանով, որ ե՛ս քեզ հյուրասիրեմ:

Ու հարցական նայում է:

— Ի՞նչ, բա իմ գլխին փափախ չկա՞,— վիրավորվեցի ես:

Այդ նրան է՛լ ավելի հետաքրքրեց:

— Ի՞նչ փափախի հարց է,— հարցրեց նա ժպտալով:

— Բա տեսնված բա՞ն է, որ կինը տղամարդուն պատվի,— մեր երկրում եղպիսի բան չկա:

— Ա՛հ, չոբա՛ն, չոբա՛ն, գնա՛նք:

Նա աչքով-ունքով ինձ սաստելով ստիպեց, որ էժանագին ճաշեր պատվիրեմ, բայց տեսնելով իմ համառությունը, ասաց,— սա օտար երկիր է, որ փողդ վերջացավ, ինչպե՞ս ես վերադառնալու, սնապարծություն մի անի,— մեծ քրոջ նման խրատեց նա ու ինքը պատվիրեց ընթրիքը (իհարկե էժանագին տեսակներից): Ես շատ անհարմար գրության մեջ էի:

«Երևի համեստ ապրող ուսուցչուհի է»– անցավ մտքովս: Բայց այս ինչ է, դիմացի փառահեղ սրահից, արվեստի ու գրականության ինձ քաջ ծանոթ հայտնի մարդիկ վեր են կենում, գլուխ տալիս ու ժպտում իմ ուղեկցուհուն: Տիկինը սիրալիր ժպիտներով պատասխանում է նրանց ողջույններին: Բայց ինչու են այդ մարդիկ տարակուսանքով ուսները թոթվում, քչփչում իրար հետ ու մեզ նայելով՝ ժպտում: Ում հետ եմ նստած ես, և ինչ տարօրինակ բան կա, որ վուշի պարզ շորերով, հասարակ սանդալներով այդ տիկինը ինձ հետ է նստած ճաշարանում:

Այդ երեկո բաժանվելիս գրեթե խստությամբ հարցրի՝ անցնելով «դու»-ի:

— Ինչո՞ւ էին մեզ նայում են մեծամեծները:

— Սատանան նրանց տանի, ես ինչ գիտեմ:

— Բայց ո՞վ ես դու:

Զգում եմ, որ հարցիս մեջ սպառնալիքի շեշտ կա—ի՛նչ մեղավոր բաներ ասես, որ չեմ մտածում այդ համեստ տիկնոջ մասին,— ինչո՞ւ պիտի թեկուզ այն գեներալ-մայորը ժպտալով խոնարհվեր սրա առաջ,— այստեղ մի բան կա, սա երևում է, որ շատերի հետ է «սիլի-բիլի» անում...

Ես տանջվում եմ այդ մտքերից, իսկ նա ծիծաղում է, անվերջ ծիծաղում— կրկեսի ա՛րջ եմ սրա համար, ի՛նչ է, ինչո՞ւ է վրաս ծիծաղում: Ու վրդովված շուռ եմ գալիս ու գնում քնելու: Այո, կոպիտ, առանց «բարի գիշեր» մաղթելու:

Մյուս օրը այգի չգնացի: Ով գիտի ով է... մենակ ես եմ, որ հիմար պարզամտությամբ տարվում եմ հենց առաջին պատահածով, ու ամեն ժպտացող ինձ բարի ու անմեղ է թվում: Չէ, իմ քեռին այդպիսի բան չի ասել: Սա ամառանոց է, երկրի բոլոր ծայրերից ամեն տեսակ մարդիկ գալիս են այստեղ, ով գիտի ինչ պտուղ է:

Բարձրանում եմ «օդի տաճար»-ը, բլուրն անց եմ կենում ու նստում ձորի պռնկին: Երեկ այս ձորից մոռ քաղեցի: Ի՛նչ անզուսպ, մանկան հրճվանքով նա ընդունեց մոռի ճյուղերը և կրծքին սեղմեց: Անմեկին մի տխրություն է համակում ինձ, և թվում է, դա ոչ թե երեկ էր, այլ շա՛տ վաղուց... Թփերի արանքից դեռ նրա երկյուղած հայացքն եմ տեսնում ու լսում տազնապալից կանչը «Ստյոպա , Ստյոպա ...»:

Չէ, հիմարություն է, նրա ողջ հոգին իր անարատ պարզությամբ արտացոլված է աչքերի մեջ: Նա չի կարող վատ արարած լինել, այդ անկարելի է, այդ քեռիս է մեղավոր՝ իր ավելորդ զգուշավորությամբ:

Ես վար ցատկեցի, անտառոտ լանջով վազեցի ցած, մտա քաղաքային այգին և դեռ հեռվից տեսա նրան՝ ծանոթ նստարանին նստած, գիրքը ձեռքին:

— Անշնո՛րիք, անշնորիք կավալեր, ո՞ւր ես կորել, ձեռքը մեկնելով ասաց նա:

Չէ, լավ է, վիրավորված չէ, էլի նույն վճիտ հայացքը, էլի նույն բարությամբ ժպտացող աչքերը:

— Ներիր, ընկեր, ընկեր... գոնե անունդ իմանայի:

— Նու, անունը կարևոր չէ, հանիր քարտեզդ, տեսնենք քեռիդ է՛լ ինչ է պատվիրել,— խոսքս կտրեց նա:

Ես քարտեզը հանեցի ու կարդացի կարմիր նշանները,— Ժելեզնավոդսկ, Էսենտուկի... .

— Լավ, գնանք Ժելեզնավոդսկ:

Գնացքից իջնելիս նա ուշադիր տնտղեց արտաքինս, ձեռքով հարդահարեց բլուզիս ծալքերն ու ասաց.

— Այսօր մաքուր ես հագնվել, միշտ պետք է մաքուր հագնվել:

Ու այնպես է ասում, որ չվիրավորվեմ, և ինչպե՞ս կարելի է վիրավորվել այդ պարզ ու հարազատ արարածից:

Բայց էլի շառագունում եմ, սատանան տանի, եթե չլիներ իմ այս կարմրելը, երևի կրկեսի կենդանու նման հետաքրքրությունն առաջ չբերեի:

Մենք ծառի հովում, կանաչի վրա պառկած զրույց էինք անում: Ես արվեստի ու գրականության մասին եմ խոսեցնում, չէ՞ որ ես կուլտուրայի ծարավ եմ, ինչքա՛ն եմ երազել սովորելու մասին, քաղաքի թատրոնի մասին: Իսկ նա շարունակ խոսքը փոխում ու վրանների կյանքից է պատմել տալիս:

— Ինչ կլինի մի բան սուլես,— թախանձեց նա,— այնպիսի մի բան, որ լսած չլինեմ:

Ես կարմրելով սուլեցի մեր սարերում հայտնի «Չոբան բայաթի»-ն: Չգիտեմ հասկացա՞վ, թե ոչ, բայց երբ իմացավ, որ մեռած հովվի մոր երգն է՝ ուղղված անտեր մնացած հոտին, զգացվեց, և նրա սիրուն աչքերում արցունքի շիթեր երևացին: Ես սիրտ առած սուլեցի աշուղի երգն «Ալմաստ» օպերայից: Նա կլանված լսեց ու խնդրեց.

— Ստյոպա, ջանիկ, սովորեցրու ինձ այդ երգը, ուղղակի հայերեն սովորեցրու:

Ու մինչ արևը մտնելը ես եռանդով սովորեցնում էի այդ սքանչելի երգը:

Բայց չնայած իմ թախանձանքին, այդ երգը նա չերգեց, և այնպես էլ չիմացա բնությունը ձայնով օժտե՞լ է նրան, թե ոչ:

Այդ երեկո նա կտրականապես հրաժարվեց ընթրիքի գալուց, բայց երբ տեսավ, որ վիրավորվում եմ՝ ասաց.

— Ընթրիքի դրամով տոմսեր կգնես, կգնանք «Եվգենիյ Օնեգին» օպերան տեսնելու, այսօր Մոսկվայի Մեծ Թատրոնի խումբը գաստրոլի է եկել: Դու կարդացե՞լ ես «Եվգենիյ Օնեգին»-ը, հանկարծ դարձավ նա ինձ:

— Այո, բայց վատ եմ հասկացել:

— Ո՞վ է քեզ ավելի դուր եկել:

— Տատյանան. սիրում եմ նրա երազկոտ ու թախճոտ բնավորությունը: Նրա համեստությունն ինձ դուր է գալիս: Մեր գյուղի աղջիկներն էլ էին ամաչկոտ ու համեստ... նա կանգ առավ և հարցական նայեց ինձ: Ես նկատեցի, թե ինչպես նա իմ վերջին բառերից ցնցվեց: Երևի զգաց, որ իրեն եմ ակնարկում: Մի պահ բարձր արժանապատվությամբ վերնից ներքև նայեց, ապա էլի իսկույն մտավ իր դերի մեջ— պարզասրտորեն ծիծաղեց և ուսիս խփելով ասաց.

— Գնանք ներս... Լավ կլինի, որ ձեր գյուղն էլ, ձեր գյուղի համեստ աղջիկներին էլ մոռանաս:

Դրամը ձեռքիցս վերցրեց և էժան տոմսերից գնելով, մնացորդն ինձ մեկնեց:

— Կարմրելու կարիք չկա, վաղն առանց կոպեկի ես մնալու, և այն ժամանակ ապրանքատար գնացքով էլ չեն տանի քեզ քո հայրենիքը... Լեռնցու հիմար ինքնասիրությունդ էլ թույլ չի տա, որ ինձանից, մի ռուս կնոջից փող վերցնես, ի՞նչ կլինի այն ժամանակ քո դրությունը... . . .

Մենք տեղավորվեցինք վերնահարկում, ուր մեծ մասամբ «կրկեսի հասարակությունն» էր տեղավորված՝ աղմկաբար և ուրախ: Դիմացի կերպասապատ օթյակից մեր Միության նշանավոր գրողներից երկուսը (այո, հենց նրանք, ես նրանց լավ եմ ճանաչում) վեր կացան և հարգանքով գլուխ տվին ուղեկցուհու:

Նրանց դեմքին ես տարակուսանք կարդացի, կարծես ասում էին՝ «Այդ ո՞ւր եք ընկել, տիկին այսինչ»:

Ուղեկցուհիս բարեսրտորեն ժպտաց և աչքով ինձ ակնարկեց: Նրանք ծիծաղեցին ու գլուխները շարժեցին, կարծես ասում էին՝ «Ի՞նչ օյինբազն է այդ տիկին այսինչը»:

Ընդմիջումներին զբոսնելիս նա ինձ բացատրում էր Չայկովսկու երաժշտության այնպիսի նյուանսներ, այնքան պա՛րզ ու խորը, որ ես զարմանում էի նրա երաժշտական կարողությունների, նրա նրբին ճաշակի վրա: «Երևի մանկապարտեզում երաժշտության դասեր է տալիս» — մտածեցի ես:

Ու նրա բացատրություններից հետո Չայկովսկին սկսում էր ինձ աստիճանաբար հասկանալի դառնալ, թեև մինչ այդ էլ նրա լիրիկական մեղեդիները ես բնագործ ըմբռնում էի — չէ՞ որ լեռը, հովը, բնությունը ներդաշնակ ձայներ շատ ունեն, և դրանք հասկանալի են իմ հոգուն: Ես դա հասկացրի իրեն: Նա ուրախացավ:

— Գիտեմ, հովիվները շատ երաժշտական մարդիկ են, քեզ միայն կուլտուրան է պակասում, շա՛տ կարդա և թատրոն ու օպերա շա՛տ գնա:

Ինչքա՛ն լավ է նրա ներկայությունը, նրա փսիսոցը, տաք շունչն ականջիս մոտ ներկայացման պահին: Բայց արյունս պղտորվում է, երբ ընդմիջումներին «բարձր հասարակությունը» օթյակներից լոռնետներով մեզ է նայում, ժպտում, աչքերով ակնարկներ անում:

Ներկայացումից հետո մենք թևանցուկ անցանք լուսնի լույսով ողողված ծառուղիներով և կանգ առանք իմ սենյակի առաջ: Երբ նա ձեռքը մեկնեց, որ «բարի գիշեր» ասի, ձեռքն ափումս հպած խնդրեցի.

— Ինչ կլինի, գնանք ինձ մոտ:

— Օհո՛, այդ չեղա՛վ, այդ է՛լ է քեռիդ պատվիրել,— ասաց նա մատը վրաս թափ տալով: Ու էլի աչքերը, չարածճի աչքերը ծիծաղում են:

Գուցե կգա, երևի «նազ է անում»:

— Գնանք,— պնդեցի ես:

Նա այնպես լրջացավ և այնպես վեհորեն արժանապատվությամբ նայեց ինձ, որ ես նսեմացա, փոքրացա նրա առջև: Երեկ էլ այդպես նայեց ինձ, և բոլորովին այլ կին դարձավ՝ անմատչելի, բարձր. . .

Բայց դա էլի միայն մի պահ տևեց: Նա նորից պարզամտորեն ծիծաղեց և ուսիս խփելով ասաց.

— Գնա, գնա, և հանգիստ քնիր: Միայն ա՛յն արա, ինչ քեռիդ պատվիրել է:

Ապա հանկարծ հարցրեց.

— Վաղը կգա՞ս կայարան ինձ ճանապարհ դնելու:

— Ու՞ր,— հանկարծակիի եկա ես:

— Գնում եմ տուն:

Ես մնացի շվարած: Այդպես ուրեմն, այլևս ողջ կյանքումս երևի էլ չտեսնեմ նրան:

— Նու, նու, մի՛ տխրիր, էլի կպատահենք, դե բարի գիշեր:

— Գոնե ասացեք ով եք, ձեր անունը, հասցեն. . . — թախանձեցի ես նորից՝ «դուք»—ին անցնելով:

Զգիտես ինչու, դժվարանում է, բայց չի էլ ուզում մերժել, չի ուզում սիրտս կոտրել:

— Լավ,— ասաց նա քիչ տատանվելուց հետո,— ահա իմ այցետոմսը:

Եվ ռեդիկյուլից մի այցետոմս մեկնեց ինձ:

Մենք բաժանվեցինք:

Մենյակ մտնելուն պես այցետոմսը շարտեցի սեղանին և բերանքսիվայր ընկա մահճակալին:

Ծանր էր, շատ ծանր հրաժեշտ տալ այդ կարճատև ու թովիչ երազին. . .

Առավոտյան ես մաքուր հագնվեցի և մեկնեցի երկաթուղու կայարան:

Ինչքա՛ն մարդիկ են հավաքվել այստեղ՝ ձեռքներին ծաղկեփնջեր:

Ինչ-որ նշանավոր մարդու են ճամփու դնում: Ո՞վ կլինի տեսնես...

Հենվել եմ ծառի բնին ու սպասում եմ իմ «մանկապարտեզի ուսուցչուհուն»:

Խփեց երկրորդ զանգը:

Վերջապես ահա նա, այն տիկինը, որին բերել են այդ անհամար ծաղկեփնջերը: Շքեղ վագոնի աստիճանների վրա կանգնած՝ նա օդային համբույրներ է հղում իր երկրպագուներին:

Հիմա գնացքը կշարժվի, իսկ ո՞ւր է նա:

Արագ քայլերով մոտեցավ ինձ իմ տանտիրուհին և մատը վրաս թափ տալով, ծիծաղելով ասաց.

— Երիտասարդ կովկասցի, այս ի՛նչ եմ տեսնում. ընդամենը հինգ օր է, ինչ այստեղ ես և արդեն հաջողացրել ես աշխարհահռչակ դերասանուհիներին կավալերություն՝ ւն անել:

— Ի՞նչ դերասանուհի, ցնդվե՞լ եք, ինչ է:

Նա պատասխանի փոխարեն ինձ մեկնեց այն այցետոմսը, որ գիշերը ես շարտել էի սեղանին:

Ձեռքից հափշտակեցի ու կարդացի.

ՄՍՌՄ Միության ժողովրդական դերասանուհի
ՎԵՐԱ ՕԴԻՆՑՈՎԱ

Կարդացի ու մնացի շվարած: Ահա թե ո՞վ է եղել պարզ շորերով ու հասարակ սանդալներով այդ կինը. . .

Նայեցի վագոնի աստիճաններին կանգնած տիկնոջը: Այո, թեև շքեղ, ինձ համար օտարոտի է հագնված, բայց իսկ և իսկ նա է, նույն մանկական անմեղ ու դյուրիշ ժպիտը նուրբ շուրթերին, նույն չարաճճի ծիծաղն աչքերում:

Ես ապշած, կարկամած նայում եմ ներքևից, և նա հետզհետե հեռանում է, բարձրանում ամպերից էլ վեր, բազմում է այդ կիսաաստվածուհին արվեստի արևային բարձունքին, այնքա՛ն բարձր ու պայծառ, որ միլիոնավոր մարդիկ տեսնում են, ճանաչում են նրան, հրճվում են նրա հանճարով ու երկրպագում նրա արվեստին, իսկ նա այդ անմատչելի

բարձունքներից սիրալիր ժպտում է մեզ բոլորիս: Ու կորչում եմ, փոքրանում, ոչնչանում: Ինչպե՞ս կարող է նկատել ինձ Մեծ Միության միլիոնավոր մարդկանց այդ գորշ զանգվածի մեջ...

Ես ցնցվեցի. նա ձեռքով կարծես ինձ է կանչում, այո՛, հենց ինձ՝ նույն երեկվա մտերիմ ու պարզ ժպիտով:

Ես տեղումս կարկամել, մեխվել եմ, միայն հիշում եմ, որ նրա տված նշանով մարդիկ ինձ տարան վագոնի դռան մոտ:

Նա կռացավ, շոյեց մազերս, ձեռքս ամուր սեղմեց ու քնքշությամբ ասաց.

— Մնաս բարի, իմ լավ չորքան, կսովորես, Մոսկվա կգաս, և այն ժամանակ քեզ անմատչելի չեն լինի ոչ Չայկովսկին, ոչ էլ ես. . .

Գնացքը շարժվեց:

Բազմաթիվ գլխարկներ ու թաշկինակներ շարժվեցին օդում, իսկ նա վագոնի բաց պատուհանից սիրուն գլուխը դուրս հանած, օդային համբույրներ էր ուղարկում:

...Ու այդ օրից առաջ գնալու, արվեստի բարձունքներին հասնելու խանդն ինձ հանգիստ չէր տալիս և շարունակ մղում էր դեպի գործ:

Տարիներ անց, երբ Կրեմլից, աշխարհի ամենամեծ մարդու մոտից դուրս եկանք հրճվանքից փայլող դեմքերով և շտապեցինք մեզ համար պատրաստված շքեղ բանկետին, այդտեղ անակնկալ կերպով հանդիպեցի նրան: Իմ ճաշակով հագուստի, արդեն նրբացած դեմքի և կիրթ շարժումների մեջ նա դժվարությամբ ճանաչեց նախկին որսորդ հովվին:

— Այս ո՛ւմ եմ տեսնում, այս ո՛ւմ եմ տեսնում,— գոչեց նա իր զրնգուն ձայնով և ի զարմանս ներկա եղողների, ինձ իր գիրկն առավ:— Ինչպե՞ս է փոխվել... ինչպե՞ս,— կրկնում էր նա ինձ շուռ ու մուռ տալով ու բոլոր կողմերից զննելով:

— Նո՞ւ, քեռիդ ինչպե՞ս է, քեռիդ է՛լ ինչ նոր բաներ է պատվիրել,— ինձ այնքան ծանոթ ծիծաղով ասաց նա: Եվ առանց պատասխանի սպասելու վրա տվեց. — Էլ չե՞ս կարմրում, ասա՛, կարմրո՞ւմ ես, թե ոչ, թե՞ երեսիդ վարագույրն արդեն պատռվել է... Այո, զգում եմ, որ այլևս այն չես, այլևս չես շառագունում, փոխվել էլ ես... Լա՛վ է եղել, որ փոխվել ես, բայց... ափսոս, ախ, ափսոս, որ փոխվել ես... Այնպես ավելի լավ էր, այնպես շատ լավ էր, այնպես դո՛ւ էիր, ինքնատիպ: Հիմա քեզ նման այնքա՛ն կա մայրաքաղաքում. . . — ասաց նա շտապ, կցկտուր, ցավով և տխրության ու ափսոսանքի նկատելի շեշտով: Ապա հետզհետե ընկավ նրա տրամադրությունը, և ես զգացի, թե ինչպես մարեց զգվանքի ինձ ծանոթ փայլը նրա երկնագույն պայծառ աչքերում, ու նա հետզհետե սառեց, հոգով հեռացավ ինձանից. . .

Բանկետի մասնակիցների խնդրանքով նա ոտքի ելավ ու երգեց իմ սովորեցրած երգը՝ «Աշուղի արիան» «Ալմաստ» օպերայից: Երգեց այնպե՛ս սրտառույշ, այնպե՛ս թախծոտ. . .

Ես զգացի, որ նա այլևս իմ ներկայությունը չի զգում և Կիսլովոդսկում տարիներ առաջ թողած հովվին է հիշում, իր երգի սրտառուչ ելևեջներով նրա հետ է խոսում. . .

Քարակոփ կացարան

Ջանգեգուրի Քարահունջ գյուղի դիմաց, ժայռերով ու թփուտներով պատած մի լանջ կա, որ նայում է Վարարակ գետին: Թեև արդեն մտել էինք ձմեռը, բայց արևահայաց այդ լանջը մերկացել էր առաջին ձյունից և այնպես ջերմ ու հյուրընկալ էր իր դեղնասաղարթ թփերով, նրանց վրա կարմրին տվող հասապտուղներով և ժայռերի վրա կչկչացող կաքավնե-րով, որ ես տափարակից եկա այդ լանջը և առաջ գնացի նրա լայնքով:

Որսս հաջող չէր, բայց բավականություն էի ստանում ծառերի վրայից և թափված տերևների միջից վայրի պտուղներ գտնելով: Մի ձորակում էլ տերևների տակ ընկույզներ գտա, մի քանիսը ծակ ու դատարկ (սկյուռներն էին դատարկել), կային և անարատ մնացածներ: Վեր նայեցի՝ ժայռի տակ մի ընկուզենի է կանգնած՝ պառաված ճյուղերը կախ: Նրա մոտ նռան ցածրիկ մի ծառ կա, երկու սերկևիլենի:

Որտեղի՞ց է այս ընտանի ծառերը՝ բնակավայրերից հեռու ընկած այս ժայռերում:

Հետաքրքրությունից մղված վեր բարձրացա: Այդ ժայռերը կանգնած էին քարերից մաքրված մի գոգավորության վրա: Այստեղ երևում էին մարդու աշխատանքի հետքերը, ժայռի տակից դեպի ծառերը հանած մի փոքրիկ առվի ցամաքած հուն, իրար զուգահեռ ձգված թմբերի երեք շարք, որոնց վրա իր ժամանակին լոբի են ցանել, այստեղ-այնտեղ ընկած մի քանի ցցեր, մի կոտրած բահ, օջախում մնացած մոխիր, ածուխ, կիսաայրված փայտերի կտորներ և մի սալաքար, որի վրա բլիթներ է թխել այդտեղի երբեմնի բնակիչը:

Մեծ ջանքերով բնությունից պոկած այդ հողակտորի տերը, որպեսզի պահպանի իր մշակույթը, ժայռի պատին բրիչով մի խորշ է փորել, որի մեջ քնել է սրթսրթալով կամ պատսպարվել անձրևից: Մի այլ խորշ իր տխուր օրերի միակ ընկերոջ՝ շան բույն է: Վերևի խորշում խոտ է դրել, որ հավաքել է ժայռերի արանքներից:

Մի վերմակի տարածություն բռնող իր այդ ողորմելի հողակտորին ապավինած, ապրել է այդտեղ նա գարնանից մինչև ուշ աշուն և որպեսզի իր քրտինքը բերք տա, ժայռի տակ մի ավազան է փորել, որի մեջ առաստաղից կաթել է գարնան ձնհալից առաջացած այն ջուրը, որ աստիճանաբար ծծվում է փուխր ժայռի մեջ: Կաթիլ առ կաթիլ հավաքել է այդ ջուրը և նրանով ոռոգել իր մի հատիկ ընկուզենին, մի զույգ սերկևիլի ծառը, նոնենին, լոբու թմբերը:

Մենատնտեսի ողորմելի, խղճով կյանք. . . Պատկերացնում եմ, ի՞նչ մոռյալ ու անավոր գիշերներ է անցկացրել շեներից ու մարդկանցից կտրված այդ չարքաշ հողագործը. . .

Աչքը Վարարակի խավար ձորին, ականջը ժայռերից եկող խորհրդավոր ու անալի ձայներին, թախիծը հոգուն չոքած. . . Այնքա՛ն այդպիսի քարակոփ կացարաններ կան

Զանգեզուրի ժայռերում: Կացարաններ, ուր պատսպարվել են կարիքից ու չար մարդուց հալածված շինականները, մեր անբախտ պապերը . . .